

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերջագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՆԱԽԱԴԳՐՈՑԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒԹ

ՊԵՏՂՐԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

372.21

4 APR 2013

7-98

0120-10

uy


2043

Ն Ա Խ Ա Դ Պ Ր Ո Ց Ա Կ Ա Ն
 Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն Ը, Ս Ո Ց Ի Ա Լ Ի Ս Տ Ա Կ Ա Ն
 Վ Ե Ր Ա Կ Ա Ռ ՈՒ Ց Մ Ա Ն Շ Ր Ջ Ա Ն ՈՒ Մ

-անկախաժառանգան դպրոցների ու դասընթացների յեվ սկսնակ նախա
 դպրոցականների համար

Մ. Դ ՈՒ Բ Գ Ա Ր Յ ՈՒ Ն

14441.57



1931

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

Պետերբուրգի տպարան
Պրավիտ 6959 (բ)
Հրատ. 1898
Պատվեր 5228
Տիրաժ 3000

I. ՆԱԽԱԳԴՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՅԵՎ
ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ^{*)}

Այն ժամանակվանից, յերբ զիալեկտրիկական մատերիալիզմի մեթոդն սկսեց ներառել մանկավարժութեան ու մանկաբանութեան վրա, նոր լուսաբանութեամբ և զբովում մանկավարժութեան տեսականն ու գործնականը վոչ միայն աշխատանքների բովանդակութեան ու մեթոդների տեսակետից, այլ և մանկավարժութեան ուսումնասիրութեան յենթակայի՝ յերեսայի նկատմամբ: Քանզվեց մանկավարժութեան խաղաղ գոյությունն, ըստ վորք մանկավարժական պրոցեսը սահմանափակվում էր զպրոցի, ընտանիքի շրջանակներում: Թե տեսական և թե գործնական աշխատանքները տանող մանկավարժների համար ակնհայտնի դարձավ այն, վոր անհրաժեշտ և ղեկավարել լայն միջավայրի ազդեցությունը մանկան վրա:

Նախադպրոցական մանկավարժությունը պետք և զարգանա մարքսիստական մանկավարժութեան ընդհանուր սկզբունքների համաձայն, ճշտելով այն դաստիարակութեան յենթակա ուրյեկտի՝ նախադպրոցական տարիքի յերեսայի վերաբերմամբ:

Չնայած այս խնդիրների կարեվորութեան, նախադպրոց. մանկավարժութեան մեջ դեռ ևս գոյություն ունի կաստայականությունն ու ցեխայնությունը (ցեխովչչինա): Մեթոդիկայի և պրակտիկայի խնդիրները մենք անջատում ենք սոցիալական դաստիարակութեան այլ կատեգորիայի աշխատանքներից: Յեվ այս բանն իր կնիքն և դնում վոչ միայն մեր տեսական հիմնավորումների, այլև գործնական աշխատանքների վրա: Մենք պետք և հաշիվ առնենք մանկավարժական աշխատանքների տարբեր բնագավառների վորձն՝ սգտադորձելու համար մյուս բնագավառներում: Մենք

*) Ըստ Սուբովցեվայի՝ մանկավարժների վորակի բարձրացման ինստիտուտին կից խորհրդակցութեան՝ թեղիաների:

դնում ենք լաՅԵ միջալայրի մանկավարժութան խնդիրը. սոցիալական դաստիարակութան բոլոր աստիճաններում մենք պետք է համաձայնեցնենք դաստիարակչական ազդեցությունները:

Նախադպրոցական մանկավարժությունը ներկայումս իր կազմաբաժան (որից ներդրվում է) հենակետն է վերցնում մանկաստանների մանկավարժությունը: Այս «հակումը» պետք է լայնացնել և հարմարեցնել աշխատանքի նոր սոցիալիստական ձևերին ու մեթոդներին: Պետք է շեշտը դնել մասսայական մանկավարժության բարձրացման վրա:

Պրոլետարիատի սոցիալիստական վերակառուցման նոր ձևերը—կոլլեկտիվներն ու սովետները, հատկապես համատարած կոլեկտիվացման շրջաններում, վոչ միայն փոխում են աշխատանքի ձևերն, այլև մանկավարժական հասարակական-արտադրական պրոցեսը, վորը կապվում է լայն միջավայրի հետ: Պետք է վերակառուցել նաև աշխատանքի մեթոդիկան դյուրում (դյուրական միջավայրի ազդեցությունը յերեխայի վրա, գյուղի յերեխայի «անհատականութան և կոնսերվատիվի» դնահատություն և այլն):

Մեր մանկավարժական աշխատանքներում համարյա բացառապես է սոցմրցման մեթոդը. յեղած փորձերը (նաև Հայաստանում) կամ չեն արդարացրել նախաձեռնողների դրած պայմանները կամ բավականացել են կազմակերպչական—քանակային ցուցանիշներով, այն էլ Գանկապարտելի նեղ սահմաններում: Մինչդեռ սոցմրցման խնդիրներ կարող են դառնալ մանկկոլեկտիվի կազմակերպման լավագույն վիճակը, յերեխաների ակտիվ մասնակցությունը իրենց կյանքի շինարարության մեջ, միջավայրի «մանկավարժացումը» ժամանակակից պահանջներով և այլն: Կոմունիստական դաստիարակությունը, կոմունիստական հանրագուտ աշխատանքը մեր ուշադրության կենտրոնում չի դառնում, մինչդեռ այդ խոշոր կրթական—դաստիարակչական նշանակություն ունի և մեծ չափով ազդում է յերեխայի հոգեկան կյանքի (պոետիկա), նրա ֆիզիկական կառուցվածքի վրա: Մանկավարժությունն իր պատշաճ տեղը չի գրավում նախադպր. աշխատանքներում:

Նախադպրոցական աշխատանքի մեջ մեծ նշանակություն են ունեցել մարքսիստական մանկավարժության սկզբունքների վրա հիմնված մանկավարժական աշխատանքի պլանավորման ձևերը:

Ըստ վորի միջավայրի վերակառուցման համար յերակետ են ընդունվել վերջինիս ուսումնասիրությունն ու վերլուծումը, մանկան կառուցվածքի ու դարդացման տվյալների հաշվառումը, մանկան ակտիվությունը կազմակերպող նյութի բովանդակությունը: Նախադպրոցական մանկավարժությունը նպատակ է դրել պատվաստել մանկան մեջ դասակարգային նպատակաճգում և կենսական ունակություններ և ստեղծել սերտ կապ մանկավարժական ու հասարակական աշխատանքների մեջ:

Իհարկե, ծրագրերի բացակայությունը մեծ դժվարություններ էր հարուցում պրակտիկ մանկավարժի առաջ, իսկ արված սխեմաների հիման վրա կազմած տեղական ծրագրերը (կազմակերպող մոմենտներ) յերբեմն խոշոր թերություններ էլին ունենում նույնիսկ յնդամեթոդում, հատկապես սկսնակ ու անպատրաստ ղեկավարների կողմից:

Մեր մանկավարժությունը դեռևս չի լուծել մեթոդական շատ խնդիրներ. մենք դեռևս կայուն մշակած տեսակետ չունենք յերեխաների յմբավորման մասին, վոր այնքան ակտուալ բնույթ է կրում նախադպրոցական մասսայական աշխատանքների դործում, չունենք ճիշտ հաշվառման մեթոդներ, պատրաստի նյութ, կոնստրուկտիվ յազդալիքներ, յիստ ընտրած դրական ու յերաժշտական ռեպերտուար: Չեն մշակված յերեխաների հասարակական-քաղաքական դաստիարակության խնդիրը, յնտերնացիոնալ դաստիարակության կոնկրետ միջոցները, հակակրոնական դաստիարակության մեթոդիկան և այլն: Մինչդեռ փաստ է, վոր յորճըրգային յերեխան դանվում է մանկհիմնարկի ու անկազմակերպ միջավայրի (ընտանիք և այլն) յաշաձեռող ազդեցության տակ, այսքարը մանկհիմնարկի կողմից յերեխային տիրապետելու համար տարվում է հաճախ անբավարար թափով ու վոչ հաստատու կամ: Ազդեցությունների յերկվությունը հաճախ կազմալուծում, թուլացնում է մանկավարժական պրոցեսի ուժը և հասարակական-քաղաքական դաստիարակությունն իր անհրաժեշտ եֆֆեկտը չի տալիս:

Կոմունիստական դաստիարակության մարտական խնդիրներից մեկն է պալիտեխնիզմը, վոր սոցիալիստական վերակառուցման շրջանում վճռական կարևորություն է ստանում. պոլիտեխնիկ դաստիարակության ընդհանուր սկզբունքների վրա հիմնվե-

ըով, մենք աղահուլեղութեան յենք նախադպրոցականի պոլիտեխնիկ դաստիարակութիւնը, համաձայնեցնելով նրա որդանկոմի առանձնահատկութիւններին ու կարողութիւններին, նրա հետաքրքրութիւններին բնույթին ու չափին: Նախադպրոցականին մենք նախապատրաստում ենք պոլիտեխնիկ դպրոցի համար հետեյալ ուղիներով. 1) ուժեղացնում ենք մեր ուշադրութիւնը դարգացնելու յերեխաների ստեղծագործական նախաձեռնութիւնը. 2) զործոն հետաքրքրութիւն ենք դարգացնում դեպի տեխնիկան, 3) յերեխաների մեջ դարգացնում ենք դիտելու, դիտողութիւնները խորացնելու և յեղրակացութիւններէ հանդէլու կարողութիւնները 4) սովորեցնում ենք պլանավորել իր «մանկական» աշխատանքները, խմատավորել աշխատանքային պրոցեսները, 5) պատաստում ենք աշխատանքի սոցիալիստական մեթոդները և 6) ճշտում ենք այն ունակութիւնները, վորոնք յերեխան ձեռք ե բերում աշխատանքի ընթացքում:

Այս ուղղութեամբ մտանալով հարցին, նախադպրոցականի (մանկավարժի) առաջ դրվում են հետեյալ խնդիրները.

- 1) կազմակերպել մանկան կոլեկտիվ աշխատանքը,
- 2) կազմակերպել այնպիսի պայմաններ, վոր յերեխան հնարավորութիւն ունենա հաճախակի համեմատել հինն ու նորը տեխնիկայի կատարելագործումը, Ֆիզիկայից, քիմիայից ու տեխնիկայից տարրական, մատչելի յերևույթներ հասկանալ, սարդ փորձեր կատարել, ծանոթանալ յերեխաներին մատչելի գործարաններին (ցեխերին), արհեստանոցներին, հաշվի առնել մեքենաները, ռադիոն, հեռախօսը և այլն և այս բոլորը կապել յերեխայի աշխատանքի ու դիտողութիւններին հետ:

Շեշտելով վերոհիշյալ խնդիրների կարևորութիւնը, մյուս կողմից—սրվող դասակարգային պայքարում հաշվի առնելով յերեխային տիրապետելու համար տարվող պայքարն ու նրան (յերեխային) սոցիալիստական վերակառուցման աղաղա գործունեութեան համար պատրաստելը և, վերջապես, մեր մանկավարժութեան մարքսիստական տեսական հիմնավորման ու տեսական-մեթոդական խնդիրներին ձեռակերպման անհրաժեշտութիւնը,—պետք ե հատուկ ուշ դարձնել հետեյալ խնդիրներին 1) պոլիտեխնիկ կրթութեամբ աղահուլեղ մեր պատրաստվող ու վերապատրաստվող կազմերը 2) մշակել կոմպատիբիլութեան հիմնական խնդիրները

ըր 3) օգտագործել ու հաշվի առնել մեր փորձը՝ խորհրդ. մանկավարժութեան նախադպրոցական սխտեմի ու մեթոդիկայի ճշտման (УТОЧНЕНИЕ) ու ձեռակերպման համար:

II. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԲԱՂԱԲԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱ-
ԽԱԴՊՐՈՅԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ.

«Մեր հիմնական խնդիրն ե՝ ինչ ել վոր լինի՝ շատ մոտ ապագայում մեր հանրապետութեան տնտեսութիւնը հասցնել չտեսնելի ված բարձրութեան. մեր խնդիրն ե՝ վոր միայն ոգնել այս բանում, այլև հրահրել, խթանել այս գործն անելու: Դպրոցն ուսումնասիրում ե կենցաղը, տնտեսութիւնը, իր շրջապատի կուլտուրական և քաղաքական մակարդակը: Բայց այս ել քիչ ե. դպրոցը պետք ե այդ կենցաղի, տնտեսութեան մեջ մտցնել ԵՊՐԸ, բարեկամայն: Այն ժամանակ միայն նա կդառնա աշխատանքային դպրոց, այն ժամանակ միայն նա (դպրոցը) կերագործի իր բուն խնդիրը՝ պատրաստել բանվոր դասակարգի իդեալների համար մարտիկներ և կոմունիստական հասարակակարգի կառուցողներ» (Շուլցին):

Խորհրդային դպրոցի նպատակների այսպիսի ձեռակերպումն ու խորհրդային մանկավարժութեան խնդիրների այսպիսի ըմբռնումը պայմանավորված ե նրանով, վոր միայն մենք, ԽՍՀՄ-ն,— առայժմ միակն ամբողջ աշխարհում—կառուցում ենք կոմունիստական հասարակակարգ և սոցիալիստական, կոլեկտիվիստական տնտեսութիւն: Իսկ այնտեղ, ուր իշխանութիւնը դեռևս կապիտալիստական դասակարգի ձեռքն ե, այլ կերպ են հասկանում դաստիարակութեան նպատակներն ու այլ կերպ կառուցում ժողովրդական լուսավորութիւնը:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Դասակարգային դաստիարակութիւնն այնքան ժամանակ դուրսիցն ե ունեցել և կունենա, քանի դեռ չի վերացել մարդկային հասարակութեան միջից դասակարգերի բաժանումը: Այս թեզը չափազանց վորոշակի դնում ե Վ. Լենինը՝ սուտ ու կեղծ թեզ անվանելով բորժուական մանկավարժութեան արտաքին ու խափուսիկ «աղաղասակարգայնութիւնը»: Այդպես ե յեղել անտիկ (հունական, հռոմեական ժողովուրդների մեջ), միջնադարյան,

Ֆեոդալական շրջաններում, այսպես է նաև այժմ, կապիտալիզմի տակա՛ն հասարակակարգում, և քանի գոյութիւն ունեն դաւա՛կարգերը, վոչ մի խոսք չի կարող լինել «համամարդկային» դաստիարակութեան ու ապաքաղաքական դաստիարակչական նպատակներէ մասին:

Մենք չենք թաղցնում, վոր մեզ մոտ դաստիարակութիւնը դասակարգային է, սակայն մի հիմնական տարբերութեամբ. մինչդեռ կապիտալիստական յերկրներում դաստիարակութիւնը ձգտում է ամբողջնել գոյութիւն ունեցող հասարակակարգը (Լայ, Ջոն Դյուի* և այլն), մեզ մոտ, պրոլետարական դաստիարակութիւնը նպատակ է դնում քանդել այդ կարգերը և պրոլետարական գիկտատուրայի միջոցով ապադա կոմունիստական հասարակակարգի հիմք դնել: Մենք արդեն մտել ենք սոցիալիզմի շրջանը և ավարտում ենք սոցիալիստական եկոնոմիկայի հիմունքների կառուցումը: Մեր դաստիարակութիւնը, նրա կաղմակերպումը, անցողիկ շրջանի յուրահատուկ կողմերն ունի, և մեր առաջադրած դաստիարակչական նպատակներն ու խնդիրները հիմնովին տարբերվում են բուրժուական մանկավարժութեան ուղիներէրց:

Նախ քան կոմունիստական դաստիարակութեան եութեան ու կաղմակերպման անցնելը, անհրաժեշտ է բնորոշել մեր ներկա սոցիալ-տնտեսական պայմաններն ու նրանցից բխող «սոցիալական պատվերները» մասսաների դաստիարակութեան վերաբերմամբ:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԹԱՆԵՐԸ

Մեր յերկիրն ապրում է սոցիալիստական վերակառուցման բուն շրջան. ծավալվող սոցիալիստական արչալը արմատախիլ է անում կապիտալիստական տարրերը. արդյունաբերութիւնը յենթարկվում է ինդուստրացման, մեքենայացվում է գլուղատնտեսութիւնը և վերակառուցվում է սոցիալիստական ամուր բաղայի, կոլեկտիվացրած տնտեսութիւնների վրա (կոլխոզ, սովխոզ և այլն): Սոցիալիստական վերակառուցումը լայն հնարավորութիւններ է անհրաժեշտութիւն է ստեղծում կուլտուրական հեղափոխութեան համար. զարգանում է գիտութիւնն ու տեխնիկան, վերանում է լայն մասսաների քաղաքական-տեխնիկական

անդրադիտութիւնը, ապադա կաղերի համար ապահովվում է պարտադիր պոլիտեխնիկ կրթութիւնը, վերակառուցվում է կենցաղը և ձևավորվում նոր սոցիալիստական-կուլտուրական կենցաղածող սերնդի մեջ, սկսած նախադպրոցական տարիքից պատվաստվում է սոց. շինարարութեան բուն ձգտում և ատելութիւն դեպի հինը, մեռնողը, այն՝ ինչ դեմ է ու խանգարում է պրոլետարատի, ինրհրդային իշխանութեան շինարարութեան, ձգտումներին, շահերին ու հեռանկարներին:

ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿՈՒՆԿՏԻՎԻԶՄ

Բուրժուական մանկավարժութիւնն իր նպատակներով ու դաստիարակութեան մեթոդներով ձգտում է ստեղծել իր դասակարգի կայունութիւնն ու արտոնութիւնները պահպանող անհատներ. չնայած բուրժուական բոլոր մանկավարժներն ամենայն հետևողականութեամբ թաղցնում են դաստիարակութեան դասակարգային եյութիւնը: Սոցիալիստական մանկավարժութիւնն (ըստ Ջեյքելի, Դյուի-ի և այլն) աշխատում է անտեսել դասակարգային ներհակութիւնները կամ հաշտեցնել այն «համամարդկային» դադալարներով ու իդեալներով: Մանկավարժական «առաջադեմ» սիստեմների առաջնալը կամ պրակտիկայի կատարելագործումը հետևանք է բուրժուադիայի շահերի ու կապիտալիստական արդյունաբերութեան պահանջներին: Ճիշտ է, պրոլետարիատի նեւ, սակայն այդ «բարենորոգչական» փորձերն ու նրանց հեղինակները չեն ուղում և չեն կարող հեռուն դնալ, և այսոր ել կապիտալիստական յերկրներում վատթարագույն վիճակումն է պրոլետարական դպրոցն ու պրոլետար յերկիւն: Գերմանացի մանկավարժ Ուտտ Ռյոդելի (ձախ սոց. դեմ) դերքը (пролетарское дитя) խայտատակ սարսեցուցիչ փաստեր է բերում այդ ուղղութեամբ:

Իսկ ինչպես է մեզ մոտ դրված անհատի դաստիարակութեան խնդիրը. ժխտում ենք արդյոք մենք անհատականութիւնը դաստիարակութեան մեջ. անթույլատրելի յենք համարում մրցման սկզբունքը և այլն. իհարկէ վո՛չ. ժողովրդական լուսավորութեան պետական կոմիտեան դեռ 1918 թ. աշխատանքի դպրոցի կանոնադրութեամբ ու դեկլարացիայով չի ժխտում ուժեղ, գունեղ անհատ

* Дьюи—«Школы будущего», стр. 115—116.

առկանութիւններէ անհրաժեշտութիւնն ու խոչոր դերը շինարարական-ստեղծագործական ասպարիզում: Ինչո՞ւն է այս տարբերութիւնը. չե՞ վոր հասարակութիւնը բաղկացած է տարբեր ընդունակութիւններէ, հակումներէ ու կարողութիւններէ տեք անհատներէ, վորոնց զարգացման և ուժերի լիարժեք ոգտագործման չի կարող դեմ լինել խորհրդային մանկավարժութիւնը: Տարբերութիւնը նրանումն է, թե ինչն ենք յեկակեա ընդունում, ո՞ւմ շահերն—անհատի՞ թե հասարակութեան (բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիութեան), խրախուսում ենք անհատական մրցումը հանուն անհատի ապագա գերելչիտող դերքի, թե՞ աշխատավոր կոլեկտիվի նպատակներն ու ձգտումներն ենք նախընտրում: Այդպես և վո՛չ միայն դպրոցում, այլև դուրսը՝ հասարակական-արտադրական կյանքում—գործարանում, կոլխոզում, պրոֆկոլեկտիվում և այլն: Մեր դաստիարակած մասնագետի, գյուղատնտեսի, տեխնիկի, մանկավարժի, յերաժշտի, բժշկի ու ատաղձագործի բնորոշ կողմն այն է, վոր նա միաժամանակ հասարակական մարդ է, վոչ միայն մասնագետ-բժիշկ, անասնաբույժ, այլև հասարակական գործիչ, վորի նպատակա՝ձգտումն է ամենալայն չափով մասնակցել մեր սոցիալիստական շինարարութեան առորային և որեցոր սրվող դասակարգային պայքարին՝ ԽՍՀՄ-ում և կապիտալիստական յերկրներում:

Ահա թե ինչո՞ւ մեր բոլոր տիպի ու աստիճանի դպրոցներում և մանկական-պատանեկական կադակերպութիւններում ուսումնա-արտադրական աշխատանքը հիմնվում է արտադրութեան և տնտեսութեան կոնկրետ պահանջներէ ու պլաններէ վրա՝ մանուկներէ ու պատանիներէ ակտիվ մասնակցութեամբ սոցշինարարութեան ու դասակարգային պայքարին:

Կապիտալիստական յերկրներում մրցումն անողոք է և նպատակ է դնում խել հակառակորդից նրա պատվերները, շուկան, գնորդներին, մինչդեռ մեր «սոցիալիստական մրցումը» յեղնում է ժողովրդ. տնտեսութեան, արտադրութեան, դպրոցի, աշխատանքային կոլեկտիվի շահերից, նրա զարգացման հեռանկարներէ: Այդ պատճառով էլ, ինչպես շատ հաջող ձևակերպել է ընկ. Ստալինը, —«Մրցման ամենանշանակալի կողմն այն է, վոր նա արմատականորեն փոխում է մարդկանց վերաբերմունքը դեպի՝ աշխատանքը, փոխարկելով այն (աշխատանքը) ծանր ու դժգոհ բեռից

(ինչպիսին յեղել է մինչև այժմ), պատվի ու վաւքի, պայծանքի ու հերոսութեան»: Այդպես էլ խորհրդային դպրոցում. աշակերտներէ մեջ մրցակցութիւն տարվում է վոչ թե թմանշաններէ, գոլասանական թերթերի ու վոսիէ մեղալներէ այլ՝ անհատական ու կոլեկտիվ՝ «սոցիալիստական գործերի համար», վորը վոչ մի նմանութեան չունի հնից ժառանգած եղոլիմին կամ ինդիվիդուալիզմին:

ՀԱՍԱՐԱԿ.—ԲԱՂ. ԴԱՍԽԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԳՐ. ՀԻՄՆԱՐԿՈՒՄ

Այս բոլորը վերաբերում է նաև նախադպրոցական տարիքին, վորանդ և սոցմրցումը, և աշխատանքային կոլեկտիվը, նպատակային առաջադրութիւններն (ЦЕЛЕВЫЕ ЗАДАНИЯ) ունեն իրենց ուրույն ձևերը, մեթոդներն ու ծախսը: Սակայն այս բոլորն ասպահովելու համար մեծ դեր է խաղում այն հանդամանքը, թե ինչպես և մեղ մոտ դրված հասարակական-քաղաքական դաստիարակութիւնը մանկապարտեզում, մանկհրապարակում, մանկատանը: Ի՛նչ անմիջական նախադրյալներ, ի՛նչ մոտեցում կա այնտեղ կոմունիստական դաստիարակութեան համար, ինչպես և պայքարում խորհրդային մանկապարտեզը աղղայնականութեան (խորթ վերաբերմունք դեպի ուրիշ աղղութիւններ), կրոնական ազդեցութիւններէ, սնահավատութիւններէ դեմ:

Հասարակական-քաղաքական դաստիարակութեան խնդրում, խորհրդային մանկապարտեզն ունի իր բացերը, վորոնցից դիտա-վորներն են *).

- 1) Հասարակ.—քաղաքական դաստիարակութեան խնդիրներն ու բովանդակութիւնը կոնկրետ չեն, շատ հաճախ հաշվի չեն առնվում միջավայրի առանձնահատկութիւնները, սոցիալիստական շինարարութեան խնդիրները.
- 2) կազմ. մոմենտը բավարար չափով հասարակ.—քաղաքական նյութ չի բովանդակում.
- 3) թույլ է յերեխաների հանրողուտ աշխատանքը.
- 4) գերելչիտում է բառային աշխատանքը, դիտելիքներն, առանց յերեխայի վործի ամրացման.
- 5) պլանային աշխատանքը շատ հաճախ անտես է անում հաս.—քաղաքական խնդիրները.

* Учен. планы «программы ИПКП» 1930, стр 32—33.

6) յերեխաները շատ քիչ են մասնակցում իրենց հանրագումար աշխատանքների կազմակերպման, պլանավորման ու հաշվառման:

7) տրվող զիտելիքները տարեկան չափավորում չունեն, ուստի և շատ հաճախ անհնար է դառնում ընդհանրացումներն ու կեդրակացութունները:

8) դեղարվեստական նյութեր (դեղեր, յերդ, նկար և այլն) հարկավոր արժեքից դուրկ է, ուստի և կարևոր ազդեցութուն չի թողնում:

9) հասարակ-մանկավարժական աշխատանքը մեծ մասամբ եպիդոտիկ բնույթ է կրում (ժողով, դասախոսութուն և այլն), աշխատանքն ընտանիքում թույլ է տարվում, անհատականորեն՝ մանկապարտեզի կողմից և վոչ հասարակական կազմակերպութունների Ախանական Փրոնտով:

Այս թերութունները վերացնելու համար անհրաժեշտ է ա) պարզարանել այն սկզբունքները, վոր պետք է դրվի յերեխաների հասարակական-քաղաքական դաստիարակության գործի կազմակերպման հիմքում (տես թեզիսներն՝ սկզբում), բ) ղեկավարներին (մանկավարժի) իդեոլոգիական պատրաստության հիմնական պահանջները, նրանց՝ շրջապատի ըմբռնումն ու վերակառուցման շրջանի խնդիրների կարելության ղիտակցելն ու այդ խնդիրներին իրացման գործին ակտիվորեն մասնակցելը և դ) յերեխաների հասարակական-քաղաքական դաստիարակության մեթոդիկան, վորի կարելութունը գրութունները տալիս ենք ստորև:

ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՄՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Յերեխաների մասնակցության խնդիրը սոցիալիստական շինարարության գործում բխում է պրոլետարական իդեոլոգիայից և նոր՝ սոցիալիստական վերաբերմունքից դեպի հասարակական կյանքն ու աշխատանքը: Մեր շրջապատում բազմաթիվ են այն յերեույթները, այն մոմենտները, վորոնք առնչութուն ունեն յերեխայի կյանքի հետ և անհրաժեշտ է ոգտագործել, — հակազատկական կամպանիա, ինդուստրացման որ, անտասի որ, թըր չունների որ, բերքի տոն և այլն:

Սոցիալիստական շինարարության և հասարակական-քաղաքական կամպանիաներին մասնակցելիս, նախադպրոցական հիմ-

նարկը պետք է հաշվի առնի վերջիններիս մատչելիութունը, կենսական կարևորութունը և ղինամիկա ու դունեղութուն մտցնի նրանց կատարման մեջ: Հիմնարկի ու յերեխաների մասնակցութունը սոց. շինարարության խնդիրներին պետք է կրեն հետևյալ զլխավոր ձևերը:

1) ազիտացիա բնակչության մեջ՝ մանկական դեմոնստրացիաների, յելույթների, գրույցների միջոցով ծնողների հետ, յերեխաների կողմից համապատասխան լոզունդներին ու պլակատներին առաջադրելն ակումբին, ընտանիքին, հանրակացարանին և այլն:

2) յերեխաների ու հիմնարկի կողմից ոգնութուն և սպասարկում մանկանյակների, ցուցահանդեսների, ցերեկույթներ, առներ և հաղեսներ անկազմակերպ յերեխաների համար և այլն:

3) յերեխաների ամիջական մասնակցութունը սոց. շինարարության և հասարակական վորոչ մոմենտներին՝ ուսիր-հոմոյթի հավաքելը, պայքար մնասատունների դեմ, թոչունների քննելի շինելը, փոխառության առժաբի, աղանավի կամ տրակտորի համար փող հավաքելը և այլն:

ՍՈՑ.-ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Սոց. շինարարության այս մոմենտների կատարումը պետք է ընթանա հետևյալ պահանջների համաձայն:

1) յերեխաներին նախապատրաստել ղիտակցելու տվյալ ձեռնարկման նպատակն ու բովանդակութունը, ոգտագործելով վոչ միայն գրույցն այլև եքսկուրսիան, նկարի ու մոդելի ղիսադութուն, լոզունդների ու պլակատների մշակում, փորձեր և այլն:

2) յերեխաներին ներգրավել հասարակական կազմակերպութունների, դպրոցի, պիտներկազմակերպության (կոլեկտիվի, աղակի) աշխատանքների մեջ, այն մոմենտներում, վոր ավելի ստիմուլներ են տալիս յերեխաների ինքնագործունեյության, հետադրոտական փորձերին, վոր ավելի հուղականութուն են առաջացնում յերեխաների մեջ. որինակ, կարմիր բանակի տոնին մասնակցելիս ղիտել բանակայինների կյանքը ճամբարում, սպորտը, սարքավորումը և այլն:

3) վորոչ ֆունկցիաների և առաջադրութիւններէ բաղկացած յերեխաների մեջ. շատ հաճախ ամբողջ խմբին տրված ընդհանուր հանձնարարութիւններն անհետեանք են անցնում, կոնկրետ արդ- յունքներ չեն տալիս. որ.՝ ծառայողները հիմնարկի հողամասում — այստեղ կարող են լինել բրիգադներ՝ «հողաչափերի», փորողների, շանտառապահների» կամ «պարտիզանների», հոգ կրողների և այլն, իհարկէ հաջորդաբար փոփոխելով զբաղմունքները.

4) սահմանել աշխատանքներին մասնակցող ղեկավարներէ ու մեծերի (պիոնր, ծնող, տեխն. աշխատավոր և այլն) դերն ու մասնակցութեան ձևերը.

5) յերեխաների մասնակցութիւնն աշխատանքների ծրագրման ու կատարման. ինչքան ել քիչ է մանկան փորձն ու թույլ են նրա հեռանկարները, պետք է այնուամենայնիվ նա ղեկավարի, ինչ և ինչպէս է անելու, ինչո՞ւ այս կամ այն «գործն» է ձեռնարկում, ինչ ժամկետներ է սահմանելու և այլն.

6) կապակցել տվյալ խնդիրը մանկան դործունեյութեան տար- բեր ձևերի հետ—բանջարանոցում տարվող ֆիզիկական աշխա- տանքը՝ խաղի մոմենտների, ֆիզիկատիարակութեան, հետազո- տական ունակութիւնների զարգացման հետ և այլն:

Հատուկ ուշադրութեան պետք է դարձնել զբաղմունքները—յերաթըշ- տական նյութի ընտրութեան, լրջունքների ու սլակատների մշակ- քան և կատարած աշխատանքի հաշվառման ու հետագա անելիք- ներին—այս խնդիրների կապակցութեամբ:

Հասարակական-ֆալսֆակն տոնրին և հուշերի օրերին (ПАМЯТНЫЕ ДНИ—հիշատակելի օրեր) առանձնապէս տեղ է արվելու մանկատարտեգում: Տոները նպաստում են յերեխաների դասակարգային դրույթի ու վարքի կազմակերպման, հնարավոր- րութիւնն են տալիս նրանց՝ իրենց ներքին մղումներն արտահայտել զօրոգութիւններով, կոնկրետ դործերով, վորոնք կապ ունեն տվյալ տոնի զաղափարի հետ. որինակ՝ Լենինյան օրերին մատչելի ձևով կատարել Լենինի սպառնաման—ողնել անկազմակերպ յերեխա- ներին, կապ հաստատել տարբեր ազգութեան յերեխաների հետ և այլն:

Հասարակական-քաղաքական տոների ընտրութիւնը կարող է լինել այն նկատառումներով, վորպէսզի այդ տոներից մի քանիսը միայն նշվեն (Փարիզի Կոմունա, Սահմանադրութեան օրը և

այլն), մյուսները՝ (մայիսի 1-ը, մարտի 8-ը, հոկտեմբեր-նո- յեմբեր և այլն) մշակվեն իբրև կազմակերպող մոմենտներ:

Հասարակական-քաղաքական տոները չպետք է շարուն բնույթ կրեն, այլ յուրաքանչյուր տոնի ընթացքում պետք է շեշտել այդ տանի բնորոչ և առանձնահատուկ կողմերը. որինակ «Մարտի 8-ը» չի կարող իր բովանդակութեամբ և բաղկացուցիչ մոմենտներ- քով կրկնել «Իերքի տոնը», դուրս ընդհանուր կետեր լինեն կա- տարման մեթոդների մեջ (եքսկուրսիա և այլն), այն ել տարբեր բովանդակութեամբ ու նյութով, մինչդեռ մեզ մոտ սովորական է դարձել միևնույն խաղը, յելույթը և այլն կրկնել բոլոր տոնե- րին:

Մյս տոները նույնպէս պետք է վերածել կազմակերպչական շրջանների. տոնի նախապատրաստութիւնն իհարկի ընդգրկելու է զրույցներն ու երկուրտիաները, կազմակերպելու է յերեխանե- րի հանրողու աշխատանքները, մշակելու է յելույթները, նա- խաղծելու է հյուրասիրութիւն կազմակերպելը, շենքը կահավո- րելը և այլն:

Տոնի բովանդակութեանը պետք է ծրագրել ըստ տարիքային խմբավորման, յուրաքանչյուր խմբի հանձնարարելով համապա- տասխան աշխատանքներ:

Ցանկալի կլինի տոներին միացնել ղեկավարման տան խոսքը (պատմվածք), պարեր, յերգ, նկարներ (դիապոզետիվ), հյուրա- արութիւն, ինսցինիրովիա, «տեխնիկների թատրոն» կամ պետ- րուշկա, նվերների բաշխումն և այլն:

Մտողների, բնակչութեան մասնակցութիւնը կարող է արտա- հայտվել վոչ միայն ներկայութեամբ, այլ և նախապատրաստական աշխատանքներին ու տոնի կատարման մասնակցելով: Պիոներների ակտիվ մասնակցութիւնն ու փոխադարձ աշխատանքները մեծ շախտի կարող են աշխուժացնել տոնը և հարստացնել նրա բովան- դակութեան արդիական ցայտուն մոմենտներով:

Տոների ընթացքում չպետք է մոռանալ անկազմակերպ յերե- խաներին, վորոնք դաստիարակման խնդրում մեծ դեր կարող է կատարել մանկճիմնարկը, մանկական կազմակերպված միջավայ- րը: Նախադպրոցական ցանցի բուռն աճումն այնուամենայնիվ դեռ ևս չի ապահովում նախադպրոց. տարիքի յերեխաների ընդգրկման բավարար % -ը, ուստի և հրամայական խնդիր է դառնում առ-

հասարակ նախադպր. մանկհիմնարկի կուլտ-դաստիարակչական մասսայական աշխատանքները թե մանկական մասսայի և թե ծնողների ու բնակչութան մեջ:

ԿԱԳ ՊԻՈՆՆԵՐՆԵՐԻ ՀԵՏ

Յերեխաների հասարակական-քաղաքական դաստիարակչութան գործում մեծ դեր է խաղում պիոներ կազմակերպությունը, շնորհիվ այն հասարակական - հեղափոխական մթնոլորտի, վոր ստեղծում են պիոներները և կից տարիքների յուրահատուկ հետաքրքրությունների ու գործունեությունից ձևերի: Պիոները նախաձեռնողն է, ինքնագործունյա, հետադուտող, ճշտապահ, կոլեկտիվի շահերին նախանձախնդիր, հեղափոխական տրամադրությունների արտահայտիչ, ակտիվ ու հնարագետ, սիրում է բնությունը, ողբ, շուրջ, արևը, բացողյա աշխատանքը, պիոներն ինտերնացիոնալիստ է. նա դասակարգային յեղբայրներ ունի ցուրտ հյուսիսում և արևադարձային յերկրներում, նա պայքարում է դասակարգային հակառակորդների դեմ աշխարհիս բոլոր մասերում. այս բոլորն այնքան գրավիչ և հովտեմբերիկի—նայսադարցականի համար՝ իր չարժուենությունը, նորություններով, գունեղություններով, պատկերներով և ստեղծագործական աշխատանքի ու սյայքարի ստիմուլներով: Սարույկի շուրջը կազմակերպված կարմիր հեքիաթը, պիոներական սովորություններն ու ատրիբուտները (հասկանիչ), պիոների խիզախությունն ու հարցասիրությունը կապում են փոքրերին պիոներ աշխատանքների հետ:

Պիոներների հետ կապի հիմնական պայմաններն են.

- 1) դերադասելի յե կապ հաստատել արտադրական-կոլեկտիվների հետ, վորոնց աշխատանքն ավելի բովանդակալի յե ու կազմակերպված (գործարանի, կոլխոզի կից).
- 2) ցանկալի յե առանձնացնել մանկավարժներից մեկին (հերթական), վորը կապ է սահպանում կոլխոզի հետ, մասնակցում է հիմնարկի ու կազմակերպության աշխատանքների ծրագրման ու կարգավորման և ղեկավարում է պիոներների աշխատանքը յերեխաների հետ.
- 3) թե պիոներների հետ մանկավարժների կողմից. տարվող աշխատանքները և թե պիոների աշխատանքը փոքրիկների հետ, պետք է նախապես ծրագրված ու համաձայնեցրած լինի, հիմնավորվի շրջապատի պահանջներով ու պայմաններով.

2043

Է. Մ. Մանուկ

4) յուրաքանչյուր մանկհիմնարկի պետք է ամբացնել մեկ կուլեկտիվ, 4-6 ողակներով, վորոնք ամբանում են տարբեր խմբերի (տարիքային) և ամբողջ ողակով կամ առանձին-առանձին (հերթական կարգով) ծրագրված աշխատանք են տանում. ողակի կապը կարող է ավելի տեվական լինել (2-3 ամիս), իսկ առանձին անդամներինը՝ կարճատե (մոտ 1 ամիս), վորին հաջորդում է ողակի մյուս անդամի աշխատանքն՝ իրրել նախորդի շարունակություն.

5) ողակավարը կամ կուլվարը մտնում է մանկհիմնարկի խորհրդի կազմի մեջ և մասնակցում ընդհանուր հասարակական-մանկավարժական աշխատանքներին.

6) կոլեկտիվի աշխատանքը մանկհիմնարկի հետ չի սահմանավակվում վորոշ ժամանակվիջողով, յեթե չկան առանձին խանդարող հանգամանքներ—ծանրաբեռնվածություն, աշխատանքի կազմալուծումն, ողակների ցրվելը, վերակազմությունը և այլն*):

Պիոներների աշխատանքների ձևերն են մանկհիմնարկում.

- 1) սիստեմատիկ կանոնավոր հաճախում.
 - 2) համապատասխան մասնակցություն կազմակերպող մոմենտների խնդիրների մշակման մեջ.
 - 3) զրույցների և եքսկուրսիաների ղեկավարություն, վորոնց միջոցով յերեխաներին կարելի յե մոտեցնել հասարակական-քաղաքական մոմենտներին.
 - 4) պիոներների մասնակցությունը հեղափոխական տոների ու զանազան կամպանիաների նախապատրաստական աշխատանքներում, յերույթներում, պատի լրագրում և այլն.
 - 5) աշխատանքային գործակցություն մանկհիմնարկում (բանջարանոց, խոհանոց, բակ, խաղահրապարակ և այլն), չանտեսելով պիոներների հետաքրքրություններն ու կարողությունները.
 - 6) խաղերի մասնակցություն և ղեկավարություն:
- Պիոներ ողակը կամ կոլեկտիվն ամբողջությամբ կարող է ծրագրված մասնակցություն ցույց տալ հիմնարկի հասարակական աշխատանքներին—մանկհրապարակի, պրիմիտիվների, ցուցահանդեսի, կոնսուլտացիայի, մանկական տոների, զրույցների

*) Տես «Ժողու» № 4, 1931 թ. 2. Պիոներների կազմակերպումը:



ու դասախոսութիւններէ, ժողովներէ ու հետադատումներէ կտրուած մակերպման գործում :

Հատուկ խնդիր և հոկտեմբերիկներէ հետ տարվող աշխատանքները. նախ չպետք է փոքրերին մեքենայորեն հոկտեմբերիկներ դարձնել. պետք է սահմանել վորոշ սկզբունքներ և հաշիվ առնել տարիքը, կազմակերպվածութիւնը, «հասարակական» աշխատանքը» և այլն : Չնայած այս հանգամանքին, հոկտեմբերիկները մանկհիմնարկում չպետք է առանձին արտոնութիւններ վայելեն, թեպետ և նրանք պիտի ընդհանրապես լինեն մանկկուլտիւրի կազմակերպողներ, նախաձեռնողներ, այսպես ասած՝ «մանկական ակտիվ»-ի դեր ստանձնեն : Հոկտեմբերիկներէ հետ կարելի չէ հատուկ կարծատեղ գրադմունքներ ունենալ, սակայն խիստ կերպով չչեզոքացնել նրանց՝ մանկական մաստայից, թե պիտե՞րը և թե մանկավարժը հաճախ ոգտագործում են հոկտեմբերիկներին՝ իրենց մանկավարժական աշխատանքներէ ընթացքում : Հոկտեմբերիկներէ հետ տարվող գրադմունքները պետք է ավելի շեշտված պիտե՞րական բնույթ կրեն և մանկապարտեղի աշխատանքներէ կրկնութիւն չըստնան, ընդհակառակը նրանք կարող են հետագայում ստիմուլ դառնալ մանկկուլտիւրի գրադմունքներէ ու աշխատանքներէ :

Պիտե՞րներէ տարած աշխատանքները մանկհիմնարկում պետք է յենթարկվեն հաշվառման՝ ղեկուցումներէ միջոցով, ժողովներին ու հաշիվառու հանդեսներին, որագրերով, պատի թերթերում, պիտե՞ր ակումբի «հոկտեմբերիկներէ» անկյունում և այլն, մտնելով ընդհանուր կարգով մանկավարժական աշխատանքներէ հաշվառման մեջ :

Պիտե՞րներէ ու հոկտեմբերիկներէ կյանքն ու աշխատանքները պատկերացնող նյութեր (յերգ, խաղ, ինսցինիւրովիա, հատկապէս՝ դատմվածքներ ու վտտանավորներ) բավականաչափ կան՝ թե հայերէն և թե ռուսերէն. առաջին հերթին պետք է ոգտագործել պիտե՞րական մամուլը, վորն ավելի թարմ, կենդանի ու կոնկրետ նյութեր և պարունակում :

III. ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍԻՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ*)

ԿՐՈՆԸ ԹՇՆԱՄԻ ՅԵ ՍՈՅՄԱԼԻՍՏԱԿԱՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՊՍՀՄ-ի ներսում դասակարգային պայքարը սրվում և տարբեր արտահայտութիւններ և ստանում : Գյուղում կուլակը դիմադրում է յորհրդային իշխանութիւն ձեռնարկումներին. կազմալուծում է կոլտնտեսութիւնը, խանդարում է հացի ու մսի մթերման և այլն. քաղաքում նեպմանն ու սպեկուլյանտը դեֆիցիտային ապրանքների շուրջը շարաչահումներ են կազմակերպում, աշխատում են կազմալուծել շուկան, իսկ խորհրդ. ապարատում և արդյունարբութիւն մեջ սոցիալիզմին թշնամի չինովիկները վնասարարութիւն են պարագում (Շախտիի ղեկաբերը, «Արդյունաբերական կուսակցութիւն», «մենչեվիկներէ բյուրոյի» գործունեութիւնը), և այլն) :

Մեր թշնամիները գործում են տարբեր միջոցներով. սկսած բացարձակ հակահեղափոխական՝ քաղաքական-տնտեսական յետլոյթներից ու գաղտնի աշխատանքից մինչեւ առորջան՝ կենցաղը, քողարկված ապիտացիան ու կրոնական ծեսերը, միջոցները : Հատկապէս կրոնական-կղերական տարբերը, վորոնք անցյալում շահագործող ու արտոնյալ խավերին պատկանելով, այժմ, «կյանքի քա մահու» կռիվ են մղում նոր կարգերի դեմ և հազար ու մի վորոգայթներով աշխատում են իրենց ազդեցութիւն յենթարկել հետոմնաց, քաղաքականապէս տհաս տարբերին, հաճախ դյուբահալապ կանանց, յերեխաներին և այլն : Վոր յեկեղեցական խորհուրդը կամ համայնքը վերցնենք, կտեսնենք, վոր մոլլայի կամ անբտերի կողքին կանգնած է նախկին «քոլովան», «պրիստավը», կալվածատերը, կապիտալիստը, մաուդերիստը և այլն : Յեւ դասակարգային թշնամին սոցիսկում է վոր միայն խորհրդ. հիմնարկ, այլ և կոլտոզ, նույնիսկ դպրոց, վորտեղ ավելի քան վասնդավոր է նրա ազդեցութիւնը. որինակներ շատ կան, ահա և մեր իրականութիւնը**). գրական-գեղարվեստական քննադատութիւնն հայտարարել է յերգեր, վորոնք նոր թխած բառերի տակ յուբացրել են հին կրոնական մերողիաները. կա նույն իսկ «յեկեղե-

*) Ըստ Բուրովցիայի, Տաուբմանի և Գերկեյի :
**) Վերգուչ. Աստվ.—«Հակակրոն. դաստ.», 930 թ. :

ժողովան ինտերնացիոնալ»․ դեպքեր են յեղել, վոր յեկեղեցում «լենինյան անկյուն» են կազմակերպել, կամ հասարակական վայրերում աշխատորներ են հայտարարվել, վորոնք մոմ կամ կրոնական դրահանութուն են տարածում․․․ կրոնականն ու նրան յանթակա «հավատացյալը» կանգ չեն առել կոլիտոնների հրկիզման ու բանկոդթակիցների սպանության առջև․․․ Այս վտանգը խորացնում են այն «մանկավարժները», վորոնք յերբեմն դասակարգային հստակ գիտակցութուն չունենալու պատճառով, յերբեմն էլ շամտորեն դասակարգային թշնամու գիրքերում կանդնած՝ խեղճությունում են մեր դպրոցի բովանդակությունն ու մեթոդները, խրախուսում են միատիցիոմ ու անհավատություն պարունակող դրահանութունը, յերգերը, երակուրսիաներ են կաղմակերպում դեպի յեկեղեցիներն ու պաշտամունքի վայրերը, էլ չենք ասում, վոր վարոչ զեպքերում իրենք էլ մասնակցում են կրոնական ծխապատարություններին:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՆ «ԿՐՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԱՌԱՍՊԵԼԸ

Բուրժուական մանկավարժութունն անցյալում և այժմ ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստում է կրոնական-կղերական դաստիարակության, կատարելով տիրող դասակարգի «սոցիալիստական պատվերը»․ յեկեղեցին շատ հաճախ դաչն է կապել թընդանոթի հետ, մանկավարժութունը—Փաշիգմի հետ․ Ծտերնը իր «Վաղ մանկության չողերանութունը» գրքում «փաստերով» ապացուցում է, վոր աստծու գաղափարը, իբրև կյանքի ու տիեզերքի սկզբնապատճառը, մատչելի յե 5½ տ․ յերեխային: Ուղղափառ, բողոքական ու կաթոլիկ յեկեղեցիները վող ընեն անցյալում միայն խարույկի վրա այրել են «հերետիկոս» հանճարների, վող միայն նդովել են նրանց (Գալիլեյ, Չ․ Բրունո, Հովհան Հուս, Դարվին, Տոլստոյ և այլն), այլ ներկայումս էլ հալածում են գիտական հեղափոխական միտքը, արգելք դնելով Մարքսի, Լենինի Դարվինի, Նոյնիսի Զոյայի, Ան․ Ջրանսի, Նյուտոնի ուսմունքի համ գրքերի վրա:

Մի՞թե մանկանը, նախադպրոցականին բնատուր կամ հատուկ և կրոնականութունն (религиозность), ինչպես գտնում են բուրժուական գիտնականներն ու մանկավարժները: Մանկան դյուրահավատ ու ներազդվող լինելը, չբնապատին յենթարկվելն ու

ընդորինակելը հաճախ այդպիսի տպավորություն է թողնում: Տարրինակ չէ, վոր մեր իրականության մեջ շատ հաճախ յերեխան յենթարկվում է այն, դեռևս ապրող, բայց մեռնող ու չբացող՝ աղբեցություններին, վորոնք իսպառ կվերանան կուլտուրական հեղափոխության ու սոցիալիստական կենցաղի ամբացումից հետո: Այժմ, յերբ դեռ կենցաղային խնդիրներն իրենց ձևակերպման չըջանումն են, յերբ դարերով մշակված ու հիմնավորված մեթոդներին շատ հաճախ հակադրվում են համեմատաբար ավելի թույլ մեթոդներ, հնի աղբեցության տակ կարող է ընկնել նաև դյուրազդաց յերեխան: Չատիկը հնում կապված էր սննդի ու ունեթղեքի (քաղցրեղեն, տապակածներ), դույների (ներկած ձու), ձայների (ժամասացություն, «ավետիս»), արտաոտոց փայլի (վոսկեղոծ չուրջառ, բուրվառ), տոնական տրամադրությունների (հանգիստ, այցելություններ, նվերներ և այլն) հետ, և այս բոլորը մտածված էր, խորամանկ կերպով կաղմակերպված մի սխտեմ էր, վորի նպատակն էր խորհրդավորություն ու հանդիսավորություն տալ այդ տոնին: Իսկ մեր տոները դեռևս նոր են կենցաղային ձևակերպում ստանում, դեռ ևս ժողովրդական հանդեսներն ու «կարնավալներն» բնույթ չեն ստացել, մանավանդ վոր սրանց կողքին յերբեմն սողոսկում է հինը,—յետամնաց, հին կենցաղին կառչած, տատանվող տարերի կողմից:

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Հակահրոնական դաստիարակության թույլ դրման պատճառներն են մանկապարտեզում․

1) անկրճն դաստիարակության սկզբունքը, վորին դեռևս կողմնակիցներ կան մեր մանկավարժների մեջ․ այսինքն՝ չխոսել, չըղբաղեցնել յերեխային կրոնական խնդիրներով, աստծու և սրբերի անուն չտալ․ իսկ յեթե յերեխան ինքն է տալիս, լուել, չնկատել․․․

2) յերբեմն մանկավարժի կրոնականությունը, հավատը, ավելի հաճախ լոյալուքյունը․

3) պրանային սխտեմատիկ աշխատանքների բացակայությունը․

4) յերեխաների կողմից կրոնական արտահայտություններին թերադնահատումը և հակահրոնական աշխատանքի թույլ մեթոդները (եստետիկ, հայեցողական, փոխանակ մատերիալիստական, դիալեկտիկ մերձեցման)․

5) Հասարակական և աշխատանքային կյանքի հետ որդանահան ուժեղ կապի բացահայտությունը:

ՀԱՅԱԿՐՈՒԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋՈՑՆԵՐԸ

Մրան պետք է հակադրել այն խնդիրներն ու միջոցները, վերանք վերջին հաշվով ապահովելու յեն հակահրոնական դաստիարակությունը նախադար. հիմնարկներում.

1) տարրական դաղափար տալ յերխաներին կրոնի դասակարգային եյության մասին.

2) գիտականորեն ճիշտ, դիալեկտիկ մտածողության հիմք դնելու համար ստեղծել համարտաբանական պայմաններ, գլխավորապես հաղորդակից անելով յերեխաներին հեղափոխական որդիականության, հրահրելով աշխատանքային դործունեյություն, յերեւոյթների (բնական-Ֆիզիկական) ճիշտ ըմբռնումն ու բացատրությունը.

3) առաջացնել յերեխաների մեջ ատելություն և բացասական վերաբերմունք դեպի կրոնական ամեն տեսակի արտահայտություն (աղոթք, նկար, ծես).

4) պարզաբանել կրոնի վնասակարությունը սոց. շինարարության գործին, կուլտուրական կյանք ստեղծելուն, մարդու առողջության (մկրտություն, հաղորդություն, պաս, համբուրել և այլն):

Այստեղ ևս մանկհիմնարկն ու մանկավարժն ուղտադործելու յեն բոլոր հնարավոր և անհրաժեշտ միջոցներ—թե՛ յերեխաների և թե՛ մեծերի հետ աշխատանք տանելիս: Բացի դրոյցից ու դասախոսություններից պետք է ոգտագործել աշխատանքը բնության մեջ, Ֆիզիկական յերեւոյթների ծանրություն, մերձեցումն տեխնիկային, վորձեր—հետադրումներ, ընտանիքի ուսումնասիրություն, մանկան կենցաղի առողջացումն ընտանիքում և այլն: Մանկապարտեզում պետք է մուտք դործեն հակահրոնական ցերեկոյթները, յելույթները, «Անասոված» մանկական թերթի հատուկ համարներ, նման ալբոմներ՝ համարտաբան նկարներից կադրած (ստանդարտից կտրված), հակահրոնական յերգեր ու «չաստուչկաներ», ցույց-կարնավալներ, ցուցահանդեսներ և այլն:

Մանկավարժին մեծ ոգնություն կարող են ցույց տալ ՄԱՄ

(«Մարտնչող Անասովածների Միություն») բջիջները՝ ցուցմունքներով, հատկապես յերեխաներին տրամադրելի նյութերով:

Անցման շրջանում անշուշտ կան և կարող են լինել կոնֆլիկտներ մանկհիմնարկի և ընտանիքի միջեւ, ուստի և ավելի անհրաժեշտ է դաստիարակչական աշխատանքը շրջապատում, վորպեսզի հնարավոր լինի հետեւորդականորեն անցկացնել և ապահովել մանկան կոմունիստական (ուրեմն և՛ հակահրոնական) դաստիարակությունը. մանկհիմնարկության աշխատանքներն ավելի կըյուրանան, յեթե հակահրոնական դաստիարակության դործում ներգրավել պիտեներներին, կոմյերիտականներին, ծնողներին, պատգամավորուհիներին, սրանցից անասովածների «ակաիվ» կազմակերպելով:

IV. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«Ժամանակակից աղոթություններից յուրաքանչյուրը բաղկացած է յերկու աղոթությունից—ատում եր Լենինը,—չահագործողներից և աշխատավորներից. և բուրժուաններն այս բանը լավ գիտեն:

Դասակարգը դասակարգի դեմ—ահա՛ թե ինչումն է հարցի եյությունը»:

ԲՈՒՐԺՈՒԱՋԻԱՅԻ ԱՋԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Նայեցեք կապիտալիստներին. նրանք աշխատում են հասարակ ժողովրդի մեջ բորբոքել աղղային ատելությունն, իսկ իրենք իրենց դործերն են դրստում, միևնույն ակցիոներական ընկերության մեջ միանում են ուսաները, լեհերը, հրեաները, դերմանացիներն ու ուկրայինացիք: Բանվորների դեմ միացել են բոլոր աղոթությունների ու կրոնի կապիտալիստները, մինչդեռ աշխատում են բանվորներին դժտեցնել ու թուլացնել աղղային վրիժառությամբ»:

Այսպես եր և ցարական Ռուսաստանն իր լայնածավալ ու բազմացեղ «ծայրադավառներով»: Տիրող բուրժուազիայի, կազմատերերի ու շինովնիկների շահերի համար նա թալանում եր ծայրամասերի ժողովուրդներին (իհարկե՛ աշխատավորության, վորին թալանում եյին և՛ իր «զոռբաները»), արտահանում եր հումքերը, ծանր հարկեր եր վերցնում, բերրի հողերը խլում,

ազգային կուլտուրան ճնշում, ուսացնում, գործարանների փոխարեն յեկեղեցիներ ու բանտեր եր հիմնում և այլն: Իր դեմ առաջացած դժգոհութիւնից խուսափելու համար ցարական կուլտուրութիւնը ազգերի մեջ թշնամութիւն եր սերմանում. ուսաներին՝ հրեաների, թյուրքերին հայերի դեմ և ընդհակառակը՝ «հրեական ջարդերն» ու «հայ թուրքական կոտորածները» — սրտհետեւանքներն էլին. ցարական կառավարութեան ողնում էլին տեղական բուրժուազիան, կղերն ու ազգայնամուկ կուսակցութիւնները (դաշնակցական, մենչեվիկյան, մուսավաթ և այլն): Ահա թե վորտեղ եր ազգային խռովութիւնների արմատը, մուկ ազգայնականութիւնն ու շովինիզմը, վորից դեռ ևս բոլորովին չեն աղակտլել յետամնաց տարրերը և վորը դեռ ևս ոգտագործում է մեր դասակարգային թշնամին՝ կուլակը, նեպմանը, նախկին վոստիկանն ու մուսուլմանները, տերտերն ու մուլլան. և այդատելութիւնը հաճախ թագուն, յերբեմն էլ հայտնի, արտահայտվում է դեռ ևս մեր շրջապատում:

ԱԳՂԱՅԻՆ ՀԱՐՅԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Պարզ է, վոր մեղ մոտ ամեն մի այդպիսի յերեկույթ անհանդուրժելի յե. Հոկտեմբերյան Հեղափոխութիւնը ԽՍՀՄ-ի բոլոր ազգութիւններին ու ժողովուրդներին տվել է ազգային ինքնորշման իրավունք, վոր մի տեղ ազգային հարցը չի լուծվել այնպես, ինչպես խորհրդ. յերկրներում: 11-14 տարիների ընթացքում չի յեղել և չեր էլ կարող լինել ազգային խռովութիւնների դեպքեր. ընդհակառակը բոլոր ազգերի աշխատավորութիւնը ձեռք-ձեռքի տված՝ սոցիալիզմի կառուցման մեծ գործին է նվիրվել. դարգանում է ազգային կուլտուրան: ԽՍՀՄ-ում կան ազգութիւններ, վորոնք խորհրդայնացման ընթացքում զեր ու գրականութիւն ձեռք բերին:

Այդպես է և մեր դպրոցը. մեր դաստիարակութիւնն ինտերնացիոնալիստական է և վոր ազգայնական: Բայց, ինչպես վերեվում ասվեց, յերբեմն արտահայտվում են վատառողջ յերեկույթներ տարբեր ազգութիւնների պատկանող մեծերի ու փոքրերի միջև՝ Ռուսաստանում «անտիսեմիտիզմի» (հրեատեցութիւն), Հայաստանում՝ «թյուրքատեցութեան» դեպքերով: և այդ այն ժամանակ, յերբ սոցիալիստական հարձակման բուռն

չրջանն ենք սպրում, յերբ սոցմրցումը միլիոնավոր մասսաների յե ներդրավել. սրանից դադարած ու աշխուժացած հակառակորդները գործի յեն անցել և ամեն տեսակ ստեր ու հերյուրանքներ են տարածում — թե աշխատավորութեան ջարդերում, թե կոլեկտիւզում, դպրոցում և թե... յեկեղեցում ու շուկայում:

ՊԱՅԲԱՐ ՊԱՏԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Պատանեկութեան ու յերեխաների համար կատաղի տղայքար է մղվում թե մեղ մոտ, թե արտասահմանում: «Պատանեկութիւնն — ահա՛ թե ինչ է պետք մեզ» — այսպես է ասում Փաշիգմի սաքաղուխ Բենիտո Մուսոլինին. նրան ձայնակցում են՝ կղերն ու բուրժուազիան, շովինիստներն ու միլիտարիստները. միայն Իտալիայում մանկական ֆաշիստական կազմակերպութիւնները՝ «Իտալիա» — (6-14 տ. ու «Ավանդարդիան» (14-ից բարձր) միլիոնից ավելի անդամներ ունեն: Իսկ անգլիական սկաուտները, չեխական «բաղնիկները» և այլն: Նրանց սղնում է բուրժուական միլիտարիզմը, կղերը, մանկավարժութիւնը, վորը մշակել է հետաքրքիր ձևվեր ու ներսպրեցութեան հիմնավորված միջոցներ:

Իսկ մեր մանկավարժութիւնը. մենք դեռ հարկավոր ուշագրութիւնը չենք դարձրել այս բանի վրա. չունենք ինտերնացիոնալ դաստիարակութեան մշակված մեթոդիկա մանկապարտեղի, դպրոցի համար, դունեղ, հուզող, պատկերավոր վոտանավորներ ու սլաոմվածքներ, հնչուն, վողեվորող, դադարակառնապես կայուն յերգիեր, արժեքավոր մանկական Ֆիլմեր. լավազույններն այդ ուղղութեամբ վոտադրութիւններ են ուսաներից («Մանկակոչ») — Ա.թ. Խնկոյանի, «Հեքիաթ Կոմիտերնի մասին» — Չարեհիցի. մեր մանկապարտեղները դեռ շարունակում են իրենց սանտիմենտալ յերեխայական (և վոր մանկական) յերգերը՝ «մենք ծիլեր ենք» կամ անորոշ, անրովանդակ վոտանավորները Լենին պայլի ու դարդաշ Հասանի մասին, իսկ միջազգային պրոլետարական տոնն՝ — հաճախ նրանք՝ իրենց թերի ու շաբլոն կատարումով միանդամայն բացասական ազդեցութիւն են կրում: Վ. Ն. Շուլցինը*) պատմում է, թե ինչպես յերբեմն վարկաբեկում են այդ տոները անհաջող վոտանավորներով ու յերգերով, սխալ լու-

*) Раскин—За интернациональное воспитание детей, 1930, Москва.

դունգներով. Լենինյան որերին նվիրված թերթերից մեկում Լենինին պատկերացնում են իբրև խելոք տղա (ПАИНЫКА МАШЫЧИК), վոր չեր աղմկում, ջանասեր եր և ասում եր... «Սովորիք, սովորիք»... կարգացեք մեր «դասադրքերը», մեր մանկական ամսադրերը, նույնը՝ այնտեղ—Լենինը ծաղիկ է քաղել, թիթեռ է բռնել և այլն. Լենինին նկարում էլին մեր գրքերում յերեխաներով շրջապատած, ճիշտ այնպես, ինչպես Հխտուսին, վոր «որհնում եր» մանուկներին ու ասում—«յեկեք առ իս»... և այլն: Յեւ այս սխալները թույլ են տալիս մեր խորհրդ. յերևատաարդ նկարիչները, մեր «խորհրդայնացած» գրողները, վորոնք մտածում են իսկական Լենինին՝ պատմության մեջ մեծազույն հեղափոխականին, Լենին-մարտիկին, զեկավարին, առաջնակարգ ինտերնացիոնալիստին, հոկտեմբերի առաջնորդին, Կոմինտերնի հիմնադրին, վորի փոթորկալի կյանքը լի յե հուզող, վոզելիբոզ, վաքակող որինակներով, դեպքերով...

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԴԱՍԻՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՆԿԱԳԱՐՏԵԶՈՒԹ

Ինտերնացիոնալ դաստիարակության նկատմամբ մանկապարտեզի խնդիրներն են.

1) պատվաստել յերեխաներին համերաշխության դրացմունքներ բոլոր ազգերի ու աշխատավորների վերաբերմամբ՝ ԽՍՀՄ-ում և արտասահմանում.

2) պատկերացում տալ ազգային դժտությունների դասակարգային ելույթյան մասին.

3) պարզել յերեխաներին Լենինի վերաբերմունքը ազգերին (այդպիսին հարցին) և ձգտում առաջացնել՝ կատարելու Լենինի պատգամներն այս ուղղությամբ.

4) Յերեխաների մեջ հետաքրքրություն առաջացնել ծանոթանալու այլ յերկրների աշխատավորության կյանքին, պայմաններին, նրան սգնելու ցանկություն առաջացնել.

5) տեղեկություններ հաղորդել յերեխաներին՝ ԽՍՀՄ-ում և այլ յերկրներում ապրող տարբեր ազգերի ու ժողովուրդներին և նրանց յերեխաների կյանքի, աշխատանքի, պայքարի մասին.

Վորոնք են այն միջոցներն ու մեթոդներն այս նպատակին հասնելու. իհարկե մանկապարտեզն այստեղ ավելի սահմանափակ հնարավորությունների առաջ է կանգնած, քան դպրոցն՝ իր ավելի

հասուն աշակերտներով, այնուամենայնիվ մենք ունենք և ընդհանուր միջոցներ.

1) պայքարել կենցաղային վատառողջ վերաբերմունքի, արտահայտությունների դեմ, լինի այդ ընտանիքում, մանկհիմնարկում, առորյայում առածի, ասացվածքի (հայր-թուրքի, ուսուի, հրեայի), անեկդոտի ձեւով, յերգի կամ վոտանավորի միջոցով, վորոնք շատ հաճախ սովորեցնում են սանը, դրական խալտուրայի ուղիով (դիրք, նկար) և այլն.

2) քննող, հետաքրքրական ու բովանդակալի դարձնել միջադրյան տոները (մարտի 8-ը, Փարիզի Կոմունան, Մայիսի 1-ը, Հոկտեմբերյան հեղափոխությունը, Նոյեմբերը՝ Հայաստանում): Տոնը պետք է կազմակերպել ուղտադործելով բոլոր միջոցները— յերգը, խոսքը, դրամատիզացիան, կարնավալը, պարը, եքսկուրսիան, պատի թերթը և այլն, ինացնելով կալում պետք է հանդես գան սարբեր ազգությունների աշխատավորները (թուրք, ուսու, հրեա, վրացի, անգլիացի, չինացի, նեգր), նրանց մասնակցությունը քաղաքացիական կռիվներին, նրանց այսրվա պայքարը, ցույցերը, դործադուլները, նրանց մասնակցությունը սոցիալիզմի կառուցման դործում. տոնին միացնել հաղթական յերթ, պիոներական սալյուտ (վողույն)— միջադրյան պրոլետարիատին, պարութներում պայքարող աշխատավորության. տոնին տալ դունեղ եֆեկաներ՝ դրոշակների, պլակատների, իսկ յերեկոյան բենդայան կրակի, լուսարձակի, լուսավոր ունկյամների միջոցով: Կազմակերպել «ազգերի կոչ», «համաք» (СМЕТ) կապելով արտահետ դնացքը, ուղիտն, դրեստավորումը և այլն.

3) եքսկուրսիաներ կազմակերպել տարբեր ազգությունների մանկհիմնարկներ, ընդհանրացնելով խաղը, ցուցահանդեսը, ետխաճաչը, նվիրատվություն, փոխադարձ ոգնություն և այլն.

4) շեֆություն, դրադրություն հետավոր վայրերի տարբեր ազգությունների յերեխաների հետ, ուղտադործելով պիոներ կազմակերպության և ԼԿՅԵՄ-ի կապի բյուրոները. փոխանակել նկարներ, լրագրեր, լուսանկար, պատի թերթ և այլն.

5) դրույց, պատմվածք, վերցնելով կենդանի, դունեղ դեպքեր, կոնկրետացնելով անունները, վայրերը, դրույցը կարելի յե կապել Փիլիի կամ դիապոզիտիվների հետ.

6) քաղաքական «խնայութեան» լրագրերից կտրած նկարները, կարճ լուսանկարներ, հաճախ խաղի միջոցով:

7) պատի լրագիր—գույներով, լուսանկարներով, լրդունգներով, աշխարհագրական—քաղաքական նկարներով:

8) ինտերնացիոնալ այլոմներ «գաղութային ժողովուրդներ» ՎՍՂՄ-ի ժողովուրդները», «մեր հարևանները», «մեր յեղբայրներն ամբողջ աշխարհում» և այլն:

9) ՄՈՊՐ-ի բլիշի կաղմակերպում («Պատանի մուրակներ»), սրա հետ կապելով պիոներական մամուլը, անդամագրքույկները և այլն:

10) ինտերնացիոնալ խաղեր, յերգեր (ունկնդրութ.) պար և այլն:

Ավելորդ է հիշեցնել, վոր ինտերնացիոնալ դաստիարակութունը չպետք է եպիդոտիկ, կամպանիայի բնույթ կրի, այլ պետք է արտահայտվի իբրև դաստիարակութան սխառեմ, չպետք է մտադանալ նաև այս աշխատանքներում ներգրավել պիոներներին, պատգամավորուհիներին, ծնողներին և այլն:

V. ՏՂԱՆԵՐԻ ՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Տղաների ու աղջիկների անհավասարութիւնն առորայում արտահայտվում է նրանով, վոր տղաների ու աղջիկների մեջ հաճախ նկատվում է բաժանում, տարածայնութիւններ, յերբմն և թշնամանք. նրանք հայտարարում են տարբեր հետաքրքրութիւններ, տարբեր նախաձեռնութիւն և մասնակցութիւն աշխատանքներում: Իհարկէ, մասամբ պատճառ է դառնում նաև մանկավարժի նախապաշարված վերաբերմունքը դեպի տղայի ու աղջկա հատարակական ֆունկցիաները, «ընդունակութիւններն ու հետաքրքրութիւնները», վոր մեծ մասամբ արդիւնք է բուրժուական հասարակարգի ու ընտանիքի աղքատութիւն:

Սեռերի հավասարութիւն խնդրում նախադպր. հիմնարկի աշխատանքները տարվելու յեն յերկու ուղղութիւնմբ. ա) հասարակական աշխատանքների դժով աջակցել կնոջ կուլտուրական արտադրական վորակի բարձրացման և կենցաղային աղատագրման (լիկկայան, դասընթացներ, զրույց-դասախոսութիւն, ժողով-

ներ, յերեկույթ և այլն). բ) յերեխաների հետ տարվող աշխատանքների միջոցով:—

1) յերեխաներին դաստիարակել իբրև սոց. շինարարութիւն հավասար մասնակցողներ:

2) տղաների ու աղջիկների մեջ առաջացնել հավասար, ընկերական վերաբերմունք:

3) նպաստել աղջիկների կաղմակերպչական ընդունակութիւնների զարգացման, խրախուսել հետաքրքրութիւն դեպի տեխնիկական, արդիականութիւնը, հասարակական կյանքը և վերացնել հին կենցաղի արտահայտութիւնները:

4) պարզ դադախար տալ յերեխաներին սեռերի անհավասարութիւն դասակարգային եյութիւն մասին և ձգտում առաջացնել պայքարելու սրա դեմ:

Չպետք է մոռանալ, վոր այստեղ ևս անհրաժեշտ է ներգրավել հասարակայնութիւն և ներաղել շրջապատի վրա:

VI. ՊՈԼԻՏԵՆԻԿ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ

1. ՊՈԼԻՏԵՆԻԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԲՈՒՆՔՆԵՐԸ

«Արտադրութիւն հանրային ղեկավարութիւնը չի կարող իրականանալ այժմյան աշխատողների միջոցով, վորոնցից յուրաքանչյուրը յենթակա յե արտադրութիւն վորևէ ճյուղին, կապված է նրան, շահագործվում է այդ արտադրութիւն կողմից, վորտեղ յուրաքանչյուրը զարգացնում է իր ընդունակութիւններից մեկը՝ մյուսների հաշիւն և ծանոթ է արտադրութիւն վորևէ ճյուղին կամ ամբողջ արտադրութիւն վորևէ ճյուղի միայն մի մասին: Մինչդեռ հանրային շահերին ծառայող արդյունարբութիւնը կարիք ունի բաղմակողմանիրեն զարգացած մարդկանց, վորոնք ծանոթ են արտադրութիւն ամբողջ սխառեմին»:

Այսպէս են նախատեսել պոլիտեխնիկ կրթութիւն եռութիւնը գեռ սրանից 70 տարի առաջ գիտական սոցիալիզմի հիմնադիրներ Մարքսն ու Ենգելսը. այսպէս եր գրում ենգելսը «Կոմունիզմի սկզբունքներ»-ում:

1-ին ինտերնացիոնալի առաջին կոնգրեսի բանաձեռում (1866 թ.) Մարքսը տվել է պոլիտեխնիկ կրթութիւն եյութիւն հոյակապ լազարութիւնն, ըստ վորի վերանում է մտավոր և ֆիզիքական

աշխատանքի մեջ գոյութիւն սենցող անջրպետը, պոլիտեխնիկ կրթութեան տակ հասկանալով «մտաւոր կրթութիւն, Ֆիզիքական կրթութեան (մարմնամարդական-դինվորական) և ծանոթութեան արտադրական պրոցեսների գիտական սկզբունքներին ու բոլոր արտադրութիւնների տարրական դործիքներին ոգտվելու գործնական ունակութիւններ»:

«Սոցիալիստական վերակառուցման շրջանում ընտրոջ է նոր ամերիկական և աշխատանքի բոլորովին նոր սոցիալիստական ձևերը (տաքսցում, հարվածայնութիւն, հանրապետական պլաններ և այլն) ... Իպրոցի սեւալ պոլիտեխնիկացիան առաջին հերթին, սահմանվում է պոլիտեխնիկի փաստացի բովանդակութեան կոնկրետ պարզարանումով, իրրև մի սխտեմ, վորը կապ ունի ԽՍՀՄ-ի կյանքի ու տնտեսութեան վերակառուցման մասնակցեթա հետ»:

Նոր սոցիալիստական տնտեսութեան սլանային կաղմահերպման պայմաններում, լայն մասսաների անմիջական մասնակցութեանը սոցիալիստական վերակառուցման բոլոր խնդիրներում շտիպանց մտտեցում են հասարակական Փունկցիաներն արտադրական-տեխնիկական Փունկցիաներին, արտադրողին (ПРОИЗВОДИТЕЛЬНИК) դարձնելով վոչ միայն վորոջ տեխնիկական Փունկցիաներ կատարող, այլև իր ամբողջութեամբ տնտեսութիւնն ու արտադրութիւնը կաղմակերպող» (I պոլիտեխն. համագ. բանաձեւերից):

Մորհրդային իշխանութեան կառուցվածքն ինքնին նպատում է մասսաներին կաղմակերպելու ժողտնտեսութեան վերակառուցման բոլոր խնդիրներին շուրջն: ժողտնտեսութեան սոցիալիստական վերակառուցման արագ տեմպերն ապահովելու համար խոր գեր է վերապահվում պոլիտեխնիկ կրթութեան: Սյալիտով պոլիտարական դիկատատուրայի շրջանում պոլիտեխնիկ կրթութիւնը դառնում է պոլիտարական իշխանութեան կրթական ջութականութեան հիմքը, յեւնելով ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական վերակառուցման պահանջներին և հիմնովին հաղաղովում է արդյունաբերութեան կապիտալիստական ուղիով հաղման մեթոդներին, այլ կերպ դնելով տեխնիկական կաղբերի սեբանվորներին պրորելմն, այլ կերպ լուծելով բանվորներին մասնակց

ցութեան խնդիրը ժողտնտեսութեան վողջ արտադրական պրոցեսում:

Իանվոր դասակարգի տիրապետութիւնը ԽՍՀՄ-ի արտադրական ու քաղաքական կյանքում, տեխնիկայի դարգացումն ու սոցիալիստական ինդուստրացման աննախընթաց տեմպերն առանձնապես սուր կերպով են դնում վորակյալ կաղբերի խնդիրը կաղբեր, վորոնց մասնադիտացումը չի հակադրվելու ընդհանուր պոլիտեխնիկ պատրաստութեան. սոցիալիզմ կառուցող յերկրում, վորտեղ ինքը բանվորութիւնն է արտադրութեան տերը, անպետք են կապիտալիստական յերկրում կիրաւովող մեթոդները, վորոնք բանվորին մեքեմայի կցորդ են դարձնում, այլ այնպիսի բանվորներ են պետք, վորոնք լայն կերպով ըընդգրկում են արտադրութեան դիտական-տեխնիկական հիմունքներն ու իվիճակի յեւ, ինչպես վերեւում ասվեց, սոցիալիստական արտադրութեան կաղմակերպիչներ դառնալու:

Սյս ուղղութեամբ է տարվելու պատանի բանվորի պոլիտեխնիկ կրթութիւնը. ամենավաղ տարիներին պետք է ապահովել պոլիտեխնիկ կրթութեան ու դաստիարակութեան ճիշտ կաղմակերպումը, վորպեսզի հնարավոր լինի ունենալ անհրաժեշտ վորակի կաղբեր:

2. ՊՈԼԻՏԵՏԵՆԻՉՄԸ ՆԱԽԱԳՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ

Սյն սկզբունքները, վոր դրվում է պոլիտեխնիկորեն պատրաստվող կաղբերի առաջ, ընդհանուր են ու վերաբերում են կրթութեան բոլոր աստիճաններին. սխալ կլինեք, յեւնելով նախագորոցական յերեխայի «սահմանափակ կարողութիւններին», տնտեսել արտադրական պրոցեսների ընդհանուր-գիտական սկզբունքները և հենվել միայն պոլիտեխնիկի «եւեմենտներին» վրա, դեռհկացնել «պարզ ունակութիւնների ու պրիոմների» ըմբռնումը և բավականանալ տարրական վարժեցմամբ (տրենիրովկա): Ընդունելով սկզբունքների ընդհանուր բնույթը, չպետք է սակայն մտառանալ, վոր «յուրաքանչյուր աստիճանում պոլիտեխնիկ կրթութիւնն ունի իր ուրույն տեսքը: Նա ընթանում է կոնցենտրիկ շրջաններով, հետեհետե լայնացնելով ու խորացնելով մանկան փորձը» (Կրուպսկայա): Ունակութիւններն առանց հասարակական նպատակադրութեան, անալիզատորների զարգացումն՝ իրրև

ինքնանպատակ-առանց յերեխային հասարակական-այժմեյակա- նության մեջ ներգրավելու- այս ամենն հեռու յե կոմունիստական գաստիարակության նպատակներից :

Փող. լուսավորության խնդիրներին նվիրված 2-րդ կուս- խորհրդակցությունը (25. 7. 30.) թվելով պոլիտեխնիկ կրթու- թյան հատկանիշներն ու մեր արդի դպրոցի բացերն այդ ուղղու- թյամբ, թվում է մի շարք միջոցներ պոլիտեխնիզմի կենսագոր- ծումն ապահովելու համար. այդ միջոցներից են՝ դպրոցի մեր- ձեցումն արտադրության, յերեխաների աշխատանքի ներդրումն արտադրության մեջ, անհատներով նրանց մասնակցությունը լա- վազույն գործարաններում, կոլխոզներում, ելեկտրոկայաններում և այլն, դպրոցի ծրագրերը կաղմել կոնկրետ արտադրության բա- ղայի վրա, դադարի տալ միասնական տնտեսական սյանի, տըն- տեսության տարբեր ճյուղերի մեջ յեղած կապի ու փոխադեցու- թյան մասին, տեխնիկական և ագրոնոմիական գիտելիքները կիրառումը գործնական բնագավառներում և այլն :

Կուսխորհրդակցության հարցադրումն ու արդի դպրոցի պո- լիտեխնիզացիայի միջոցներն ընդհանուր առմամբ տարածվում են նաև նախադպրոցական տարիքի յերեխաների վրա, անհրաժեշտ սահմանափակումներով ու չափավորումներով, մտցնելով ման- կան գործունեյության այն տարրերը, վորոնք ավելի բնորոշ ու հատուկ են նախադպրոցականին :

Այս նկատառումներով նախադպրոցական հիմնարկի առաջ պոլիտեխնիկ դաստիարակության համար դրվում են հետևյալ պահանջները .

1. Դաստիարակել նախադպրոց. մանկան մեջ դասակարգային ճպտակադրում ու աշխատանքային իմքնագործունեյություն, կո- լեկտիվ գործունեյության ունակություններ :

2. Արտադրական տեխնոլոգիական ծանրություն պարզ ու մատչելի նյութերի մշակման :

3. Արտադրական-տեխնիկական պատրաստություն. դարդաց- ներ յերեխայի մեջ ստեղծագործական հետաքրքրություն դեպի տեխնիկան, խրախուսել կառուցողական (КОНСТРУКТИВНЫМ) և կոմբինատոր ընդունակությունները, պատվաստել նյութի և գոր- ծիքների հետ վարվելու տեխնիկական ունակություններ :

4. Պատվաստել յերեխայի մեջ աշխատանքի ռացիոնալ կազ-

մակերպման անհատական և կոլեկտիվ ունակություններ, աշխա- տանքի պլաններում ու հաշվառումն, հողատար վերաբերմունք գեպի նյութն ու գործիքները, աշխատանքի կաղմակերպություն («կարգապահություն»), առողջապահական ունակությունների ձեռքերումն ու պահպանությունն՝ աշխատանքի ընթացքում :

5. Ձարգացնել անալիզատորների ֆունկցիաների վորոշակիու- թյուն և նպատակադրություն կամ մասնավորում (ДИФФЕРЕНЦИРО- ВАНИЕ) :

6. Մանկան մտորիկայի գարգացումն՝ նրա գործունեյության շուրջ բնագավառներում, հատկապես աշխատանքային պրոցես- ների ու խաղի ընթացքում :

Սակայն անհրաժեշտ է պարզել՝ վորոնք են այն բնագավառ- ները՝ վոր ավելի շուտ են նպաստում պոլիտեխնիկ դաստիարակու- թյան գործնական կիրառման և վորոնք են այն մեթոդները, վոր ղեկը են հանդիսանալու մանկավարժի ձեռքում—մանկան կենցաղն ու աշխատանքը պոլիտեխնիզացիայի յենթարկելու : Այդ նպատա- կով անհրաժեշտ է :

1. Նախադպրոցականի (մանկան) աշխատանքային գործունե- յությունն ապահովել համապատասխան տեխնիկական կահավո- րությամբ, մեր մանկապարտեղները (հատկապես պրիմիտիվները) ժամանցի, լավազույն դեպքում խաղի վայրեր են ներկայաց- նում, վոչ մի դեպքում հնարավորություն չտալով մանկան իբ բովանդակ հետաքրքրությունները հայտնաբերելու կամ ստացած տպավորությունները շարժողական-աշխատանքային ձեվերով վերարտադրելու : Չափազանցություն չի լինի ասել, վոր կահա- վորության ու աշխատանքի կաղմակերպման տեսակետից մանկա- պարտեղը պետք է ոնդգրկի արտադրության այս կամ այն ճյուղի (գործարան, կոլխոզ, ելեկտրոկայան, դեպո, արտադրական կոո- պերացիա և այլն) հիմնական հատկանիշներն ու արտադրական ֆունկցիաների պատկերացումը պետք է տա :

Մի՞թե չի կարող կոլխոզին կից մանկապարտեղը դերազանցո- րեն տեղ տալ դյուղատնտեսության մեքենայացման հետ կապված կահավորության, գործիքներին, մեքենաներին, թռչնաբուծու- թյան կամ ճագարաբուծության ուղղությամբ կաղմակերպելով «որինակելի գծով», վանդակներ, հավանոց և այլն, իսկ բանջարա- բուծության գծով՝ մշակած ու պլանավորված- հողամաս, ջեր- մանոց, պահեստ և այլն : Ինչո՞ւ չի կարելի նույն նպատակով քու-

գարի (գործարանային) մանկապարտեզում աշխատանքները կազմակերպել «ցեխերով», թեկուզ այդ ցեխում տարվի նաև կալի կամ կոնստրուկտիվ աշխատանք. մանկապարտեզի («գործարանի», թե չէ ֆրեբելյան մանկապարտեզը մեզ մոտ վաղուց և կորցրել էր բովանդակությունը, չնայած անունը դեռ մնում և) աշխատանքներն սկսել չչակի ձայնով, խմբավորումը՝ բրիգադներով կամ ցեխերով, իհարկե, պահպանելով տարիքային հետաքրքրությունների ուղղությունը և կայունությունը սկզբունքները: Իսկ յեթե այս ընդունելի յե, չե՞ վոր պետք է ցեխը կամ կայանն ունենա իր համապատասխան կահավորությունը՝ ստեղծագործական «արտադրական» խող—աշխատանքի համար, գործիքներն ու նյութը՝ գործելու—ձեվափոխելու համար, իր «բրիգադաները», «արտադրությունները», «արտ. հագուստը», «ներքին կանոնադրությունները» ու ուժերը, թեկուզ և նկարներով՝ դրի փոխաբեկ կամ՝ բանավոր:

Այս հարցում հսկայական հեղաշրջում է առաջ բերում «նախադրոցական ինստրումենտարիյ»-ն (որինակ՝ կրուպսկայայի անվան կոմ. դասը, Ալկադեմիայի դյուտը), պոլիտեխնիկական խաղալիքներն ու պլատեյքները, հատկապես «կոնստրուկտոր» (Սեկանո կամ «պլոններ») արկղը, վորի տեխնիկական թերությունները վերացնելով, մասերի քանակի ավելանալով ու կատարելագործելով և դինն եփանացնելով, մենք նախադրոցականի ձեռքը կտանք շատ արժեքավոր «դիդակտիկ» նյութ: Այստեղ հսկայական նշանակություն են ստանում և անպետք նյութերը, վորոնք կարող են ծառայել տեխնիկական կառուցումներին—ելեքտրական սարքավորումը, շարժիչները, դանդերն ու հեռախոսը, անիվները, մոտորը, պրոպելլերը, պարանը, լարը, ճախարակը և այլն, յեղել են դեպքեր (Մոսկվայում), յերբ նախադրոցական յերեխաներն իրենք «դյուտ են արել» ճախարակների՝ միջոցով աթոռակները՝ փոխանակ ամեն անգամ շալակելու՝ փոխադրել վերելից ներքեվի հարկը (սեղանատուն):

2. Շրջապատում մեծերի աշխատանքային գործունեության ծանոթանալը. նախքան կոլլեոդի կամ արհեստանոցի աշխատանքների կոնկրետացնելն ու տեխնիկական ունակություններին ծանոթանալը անհրաժեշտ է համապատասխան տպավորություններն ու յեղրակացությունները, թե կազմակերպված էքսկուրսիաների

և թե աղատ դիտողությունների միջոցով—գործարանում, արհեստանոցում, փողոցում (շարժիչներ), կայարանում, դեռափին և այլն: Յերեխաների ուշադրությունը պետք է կենտրոնացնել տեխնիկայի աճման, նրա առավելությունների վրա պրիմիտիվ գործիքների ու միջոցների նկատմամբ (վոտալոր, ձիավոր ավտո, շողենավ, արոր, բահ, փոցիկ-արակտոր, հնձող մեքենա): Իհարկե շողենավ, արոր, բահ, փոցիկ-արակտոր, հնձող մեքենա): Իհարկե քսկուրսիաներն ու դիտողությունները չպետք է լուր հայեցողական բնույթ կրեն, այլ պետք է ստիմուլ հանդիսանան յերեխաների աշխատանքային ստեղծագործության, սենն նրանց «աղատ» յեր աշխատանքային ստեղծագործության, սենն նրանց «աղատ» գործունեությունը, խողն ու աշխատանքը, վերարտադրվեն նկարչության ու ծեփի միջոցով և տեղ բռնեն կազմակերպող մամենտում թե մանկավարժական և թե հասարակական—մանկավարժական աշխատանքների բնազավառում:

3. Աշխատանքային գործունեության ձեվերը նախադրոցական հիմնարկում պետք է պայմանավորվեն մի կողմից պոլիտեխնիկ դաստիարակության պահանջներով, վոր անբաժան են կոմուն. դաստիարակության պահանջներից, մյուս կողմից հաշվեառնեն մանկան տարիքային հետաքրքրություններն ու կարողությունները: Այստեղ մեզ համար չի կարող անվերապահորեն ընդունելի համարվել մանկան փաստացի վիճակը, քանի վոր մեր առջայում յերեխան հաճախ ծանրաբեռնվում է, յերբեմն նույն իսկ շահագործվում: Յեթե մենք թվենք այն պարտականությունները և աշխատանքները*), վոր կատարում են մեր նախադրոցականներն ու դպրոցականներն, այնքան ել հանդուրժելի յեղրակացությունների չենք հանդիլ—խանութ կամ շուկա հաճախել, սենյակը հավաքել, վառարանը վառել, ամաններ վլալ, ջուր և փայտ բեքել, փայտ կտորել...

- Լվացք անել, թեյ և ճաշ պատրաստել, պրիմուսը վառել...
- Լվացքը չորացնել, հարդուկել, գուլպա գործել, կարկատան տնկ...
- Փողոցը, բակը սրբել, աղբը թափել, իրերը տեղափոխել...
- Փող ստանալ, ծախսել, հեռախոսել, փոստ-հեռագրատուն դառնալ և այլն:

*) Шульгин—На путях к политехнизму Бернштейн—Бюджет времени школьника.

Յեւ այսպիսի մի քանի տասնյակ աշխատանքներ, իհարկե այս աշխատանքները մեծ մասը մատչելի չե դպրոցականին, վորոշ մասը. նաև նախադպրոցականին, սակայն հարկադրել մեկին կամ մյուսին փայտ կտորել կամ յերեխային պահել—այդ արդեն անհանդուրժելի չե, վորովհետև մի դեպքում կապված ե Փիղիքական ուժեղ կարողութունները ու հմտութունները հետ, մյուս դեպքում մանկավարժական տակտ ու պրոյեմներ ե պահանջում: Վերջապես մեծ նշանակութուն ունի և այն, թե ի՞նչպես ե կադմակերպվում այդ աշխատանքը և ինչ չափով «մանկավարժական պրոցեսի» բնույթ ե կրում այն:

Մանկան գործունեյության հարցում հիմնական խնդիրներն են աշխատանքի բաղմադանութունը, վորի հետ կապված են տարբեր հետաքրքրութուններ ու փորձ, տարբեր ձեւեր ու հմտութուններ, Փիղիքական լարման ու եներգիայի սպառման տարբեր ստիճաններ, յերանգներ: Հետադասական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ ե տեղ տալ մատչելի ձեւով Փիղիքական յերեւելութունների փորձերին. ինքնասպասավորման աշխատանքներում, հերթապահության, շաբաթորյակներին, խոհանոցի և սանիտարական աշխատանքներին, արտադրական աշխատանքներին առանցքն ե կադմիլու—ատաղձադորձական, կարտոնաժի, կավի, տեքստիլ աշխատանքներն ու կարը (խոշոր կար՝ մեծ կտորների վրա). բնության մեջ և դյուղատնտեսական աշխատանքները տարվելու յեն բանջարանոցում, կենդանի անկյունում, կոլտոգի պարզ ու կենդանի ձեռնարկութուններում և այլն:

Աշխատանքի ճիշտ կադմակերպումն ու չափավորումը, նյութի ու գործիքների ընտրությունը և մանկան գործունեյության տարբեր տարրերի համակարգումը, համաձայնեցումը մեծ ուշադրություն ե պահանջում նախադպրոցականից և այդ խնդիրը պետք ե հատկապես մշակել:

Պրիտեխնիզմի կիրառումը նախադպրոցական հիմնարկում անչուշտ ունի յուրահատուկ դժվարութուններ՝ հատկապես յերեխայի գործունեյության տարբեր բնագավառները սահմանելու և կիրառման մեթոդները մշակելու խնդրում: Հիմնականում վերցնելով յերեխաների խաղն ու աշխատանքը (իրրե գործունեյության դերիչխող ձեւեր) պետք ե այս բնագավառներում յենթարկել մանկապարտեզում յերեխայի հետ տարվող աշխատանքները, թե ըստ բովանդակության և թե ըստ կատարման ձե-

վերի. միանգամայն սխալ ե նախկին աշխատանքային պրոցեսները (այսպես կոչված «ձեռարկետը», ինքնասպասավորումը և այլն) նույնացնել պրիտեխնիզմի եության ու նշանակության հետ: Այստեղ ամենից շատ վտանգ ե սպառնում ընկնել տարրական «արհեստավորության» (ремесленничество) և անխնդրական ունակութունների միակողմանի վարժեցման (дресировка) սխալների մեջ:

Նախադպրոցական մանկավարժութունն առաջիկայում պետք ե հատուկ ուշադրութուն դարձնի պրիտեխնիզմի մեթոդիկային և այն կադմակերպչական խնդիրներին, վորոնք ապահովում են յերեխայի կոմունիստական-պրիտեխնիքական դաստիարակությունն ու լիարժեք Փիղիքական դարձացումը:

VII. ԿՈՒՆՏՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԻԻՐՆԵՐԸ

Գյուղատնտեսության վերակառուցումը կոլեկտիվացման հիմունքներով, դարնանացանի և աշնանացանի կանոնավոր կադմանկերպումը, բերքի հավաքը, դյուղարդյունաբերության բարձրացման խնդիրները, դյուղի մեքենայացման ընթացքը, կադրերի մասնաբաժնի վերաբերյալ դյուղատնտեսության համար և դյուղի կուլտուրայական վերելքի տեմպերի արագացման անհրաժեշտությունը,—այս կան վերելքի տեմպերի արագացման անհրաժեշտությունը,—այս բոլորը ներկայումս, ավելի քան յերբեիցե անհրաժեշտն դարձնում յերեխաների հասարակական դաստիարակությունը: «Մարդկային եներգիայի աննպաստ վատնումն ե՝ կնոջ անհատական աշխատանքը ցրված տնտեսութուններում, ընտանիքում և այլն: Մենք չենք կարող թույլ տալ այսպիսի շոյալություն»: Մինչդեռ վերելում թված խնդիրների մեջ կինը հավասարապես շահադրդաված ե և հավասար մասնակցություն ե ունենալու:

ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՆ ԱՆՇՐԱԺԵՏ ԿՈՒՆՈՑՈՒՄ ՆԱԽԱԴՊՐ. ՀԻՄՆԱՐԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այստեղից անհրաժեշտություն ե առաջանում քանի դեռևս անհրաժեշտ ե նախադպրոց. ընդհանուր դաստիարակությունը—

*) Дошкольному работнику колхоза, 1930 г. В помощь дошк. работнику колхоза, 1929 г. Детский сад в колхозе, 2 выпуска (на зимн. и осени. кварталы), 1930 г. Сельскохозяйств. труд дошкольника в колхозе, 1930 г.

Համատարած կոլեկտիվացման վայրերում 100 տակոսով ընդգրկել նախադպրոցականներին, իսկ վոչ Համատարած շրջաններում ապահովել առաջին հերթին կոլտնտեսութան մեջ աշխատող ծնադներին յերեխաներին լիովին, վորով Հնարավորութուն կարող է կոլտնտեսուն ամբողջովին նվիրվել արտադրական-հասարակական աշխատանքներին և ապահովված կլինի յերեխաների՝ ապագա կոլտնտեսիկներին ու կոմունարներին՝ կոմունիստական դաստիարակութունը:

Կոլտնտեսներում անհրաժեշտ և կադմակերպել թե նորմալ տիպի նախադպրոցական հիմնարկներ և թե պրիմիտիվներ. առաջիններն են 8-ժամյա (մինիմում) մանկապարտեզն ու 8-ժամյա (մինիմում) մանկոջախը. ամառվա ընթացքում այս հիմնարկներում աշխատանքի տեղադրվումը պետք է հարմարվի ծնողներին պայմաններին:

Բոլոր տիպերի հիմնարկներին անհրաժեշտ է առանձին շենք, վորը համապատասխանելու յե մանկավարժական և առողջապահության տարրական պահանջներին:

Առանձին կարևորութուն պետք է տրվի յերեխաների սննդին. վորտեղ սնունդը համայնացրած է, հարցը հեշտությամբ կլուծվի — յեթե անհնար է առանձին խոհանոց կադմակերպել, պետք է ոգտվել կոլտողի ճաշարանից, կերակրացանկը (մենյու) և հիգիենիկ-սանիտարական պայմանները հարմարեցնելով յերեխաներին:

Ինկատի սենեալով այն հանգամանքը, վոր կոլտողները մեծ մասամբ մուրներ չունեն, պետք է նախադպրոց. հիմնարկին կից կադմակերպել մուրային խմբակ, առանձին սենյակ և աշխատակից հատկացնելով սրան:

Բյուջեների սակավության և համապատասխան թվով պատրաստի կադր չունենալու պատճառով պետք է ոգտագործել կոլտնտեսիկներին և տեղի կին-ակտիվին մատչելի աշխատանքներում — յերեխաների հաղուստը հանելն ու հաղցնելը, կերակրելիս, երկուրսիս, հանգստի ժամին և այլն: Մանկավարժական աշխատանքներում (խաղ, աշխատանք, տոներ և այլն) կարելի յե ներգրավել հետդհետե, յեթե հիմնարկի ղեկավարն ու կուլտ-կենցաղային մարմինները հատուկ աշխատանք տանեն այդ ուղղությամբ պատրաստելու և սխառեմատիկորեն վերապատրաստելու:

Պրիմիտիվները կադմակերպվում են այն դեպքում, յեթե

չկան բավարար չափով անհրաժեշտ պայմաններ (շենք, բյուջե, ղեկավար պերսոնալ և այլն). պրիմիտիվներից են՝ ձմեռային և ամառային հրապարակները, դպրոցներին կից միակոմպլեկտանի խմբակները, խրճիթ-ընթերցարաններին կից մանկասնյակը, մանկակական անկյունը և այլն: Այստեղ դուրքը ևս պրիմիտիվ ձևի յե, այն ել ամենաանհրաժեշտը, սակայն չմոռանալով դարձյալ յերեխաներին հարմարեցնելու պահանջները:

Պրիմիտիվում նույնպես ապահովվելու յե բավարար ընդհանուր նախաձայր (տաք սնունդ), բժշկական հսկողությունը և տեխնիկական-սանիտարական աշխատանքները (ոգտագործել կոլտողի պերսոնալը):

Բացի ցերեկային հիմնարկներից, կարող են կադմակերպվել յերեկոյան եպիգոտիկ պրիմիտիվներ, վորպեսզի հնարավորութուն տրվի մայրերին մասնակցելու ժողովներին, ընտրություններին (խորհուրդներին, կոլտող-վարչության, պատգամավորական և այլն), խմբակային աշխատանքներին, տոներին, անդրադիտության վերացման, ինքնադարգացման, կոլտնտեսական ժամանցի և այլն. այստեղ ավելի ևս հնարավոր է գործի դնել կին-ակտիվին, արտերերներին, կոմյերիտականներին և ուսուցիչներին:

Կան և մանկավարժական աշխատանք բնակչության, ծնողներին և կոլտողին կից մանկհիմնարկը տանելու յե լայն կուլտ-կրթական և մանկավարժական աշխատանք բնակչության, ծնողներին և մանկհիմնարկում չընդգրկած յերեխաների մեջ, ոգտագործելով մանկավարժ. պրոպագանդայի, կոնկուրսի, կոնսուլտացիայի, ցուցահանդեսի, գրադարան-ընթերցարանի, մայրերի խմբակների, կամպանիաների, մանկական յելուցիթների, հարց ու պատասխանի յերեկոների, ղեկուցումների ու դասախոսությունների, հետադրաման և այլ ձևերն ու մեթոդները:

Կոլտողային մանկհիմնարկի բյուջեն կազմվում է հետևյալ օգրբյուրներից.

ա) կոլտողը տալիս է շենք, վառելիք, կոմունալ ծախսեր և սնունդ. այս ծախսերին, հատկապես կահավորության կարելի յե մասնակցի անել շեֆ-տնտեսություններին, կոոպերացիային, փոխոգն. կոմիտեներին, «Կարմիր խաչի» և «Մանուկների բարեկամ» ը կերություններին և այլն.

բ) մանկավարժ. պերսոնալի աշխատավարձն իր վրա յե վերց-

նում Սոց կուլտ բաժինը (Լուսբաժին), վոր այդ դումարը մտցնում է եր նախահաշվի մեջ. չնախատեսված դեպքերում այս ծախսերին ևս կարելի չե մասնակից անել հասարակական-տնտեսական մարմիններին:

Թե կոլխոզը և թե շրջգործկոմն իրենց առաջիկա պլաններում ապահովելու յեն հատուկ մանկապարտեղի շենքի կառուցումը:

Մանկավ. պերսոնալի նշանակելն ու արձակելը, նաև ընդհանուր մանկավարժ. դեկավարությունը վերապահվելու յե լուսբաժինին. մանկհիմնարկի խորհրդի կազմում մասնակցում ե նաև կոլխոզի վարչության (կուլտ-կենցաղ. հանձնաժողովի) ներկայացուցիչը: Գոյություն ունեցող նախադպրոցական կանոնադրություններն ու հրահանգները ամբողջովին վերաբերում են նաև կոլխոզային մանկհիմնարկներին:

ՆԱԽԱԳՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՒՆՈՁԻ ՄԱՆԿԱԿՐԱԿՈՒՄ

Նախապատրաստական աշխատանքի բովանդակությունն ու մեթոդներն ընդանրապես նույն են նաև կոլխոզային մանկապարտեղում ու պրիմիալներում. ինկատի ունենալով դյուղի արտադրական-տնտեսական և կուլտ-կենցաղային առանձնահատուկ պայմաններն, աշխատանքներին տրվում ե այս կամ այն ուղղությունը, բնույթը, ծավալը. այդպիսի խնդիրներ են.—

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿՈՒՆՈՒՐԱ

Սան-առողջապահական աշխատանքն, ինկատի ունենալով համախ դյուղի համեմատաբար անկուլտուրական և յետամնաց վիճակը, պետք ե հատուկ ուշադրություն դարձնել մանկան անհատական և սոցիալական առողջապահության խնդիրներին, ճրգտելով միաժամանակ պատվաստել այդ ունակությունները նաև կոլխոզում և ընտանիքում. քնի, սննդի, մարմնի, հանգստի. աշխատանքի առողջապահությունը չափազանց կարևոր տեղ ե գրավելու:

ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անշուշտ դյուղում ավելի թույլ ե արտահայտվում արդիա-կանությունը, չնայած կոլխոզն այդ խնդրում շատ ավելի բարձր ե դյուղի ընդհանուր տնտեսական. կուլտուրական մակարդակից.

կա նաև կարծիք, վոր դյուղական յերեսան (անշուշտ անհատական տնտեսություններին) ավելի եգոիստ ե, անհատական շահերի ուժեղ ձգտումներով և այլն. այս պայմաններում ավելի ևս շեշտվելու յե հասարակական-քաղաքական դաստիարակությունը, կուլկտիվ աշխատանքը և մանկկուլկտիվի կազմակերպումը. այս հարցում, պետք ե ոգտագործել ընդհանուր սնունդը, դյուղատնտեսական աշխատանքները (հողամասում), մանկական և հեղափոխական տոները, հավաքույթները, ժողովները և ընդհանուր խաղերն ու եքսկուրսիաները: Այստեղ ևս կարող ե արտահայտվել «չերտավորումը», միջակի յերեսայի վերաբերմունքը դեպի չքավորը, դյուղի հասարակական կյանքի այս կամ այն մոմենտների վերարտադրությունը յերեսաների կողմից (հացամթերում, կուլկտիվի-դասցիա և այլն): Ղեկավարն ինքը պետք ե այս յերեսութներին դաստիարակյին վերաբերմունք ցույց տա, ուղղություն տալով յերեսաներին՝ նրանց խաղերի, վոխադարձ վերաբերմունքի, աշխատանքների ընթացքում:

Աչալուրջ պետք ե լինել մանավանդ դյուղում դասակարգային քայքայրի սրման ներկա շրջանում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Ծանոթանալով կոլխոզի կյանքի հիմունքներին, յերեսաները համոզվում են, վոր դյուղատնտեսության հաջողությունները պայմանավորված են վոչ թե «աստու հողատարությամբ» կամ աղոթքներով, այլ նրանով, թե ինչ չափով մեքենայացրած ե դյուղատնտեսությունը. նրանք ծանոթանում են մեքենաներին (տրակտոր, շարքացան, կախող, սերմադալիչ և այլն) սերմերի ընտրության, հողի հատկության ու մշակման պայմաններին և աշխատանքի կազմակերպման՝ հարվածային բրիգադներ, ջոկատներ, քոցմրցումն և այլն:

Այսպիսով յերեսայի մեջ սկզբից ևեթ ամբանում ե մատերիալիստական մերձեցումը շրջապատին և ռեալիստական վերաբերաբարերմունք դեպի կյանքը, դեպի բնության յերեվոյթները: Բնության պասսիվ դիտողություններն ու հայեցողական վերաբերմունքը դեպի «բնության գեղեցկությունները» խորթ են թվում այսպես դաստիարակված յերեսաներին: Եքսկուրսիաների ընթացքում յերեսաները ծանոթանում են վոչ միայն բնության յե-

բևույթներին, այլ և այդ յերևույթների պատճառահանութան, որինակ՝ որերի տաքանալու հետ կապված է դաշտերի կանաչելը, թռչունների վերադարձը, ամպերը կուտակվում են—հավանական է անձրևը, գոգոռում են—կարող է կարկուտ լինել, ըստ հնարավորութան պետք է աշխատել, ցուցադրելու գիտութան և տեխնիկայի նվաճումները բնութան յերևույթների դեմ. որինակ. պատանհներն ու պատվարները հեղեղումների ժամանակ, կարկտահար հրթիռը՝ ամպրոպի դեպքում, կենդանիներին պատվաստելը՝ ժանտախտի ժամանակ և այլն: Այս յերևույթները հատուկ են գյուղական միջավայրերին և պետք է անշուշտ տեղին ոգտադործել:

Ինչ վերաբերում է բնութան նյութերի ոգտադործման, այստեղ գյուղում ավելի լայն հնարավորություններ կան. արհեստական նյութերը գյուղում հեշտութամբ փոխարինվում են բնական, անպետք նյութերով, տերեւներով, ճյուղերով, վոստերով, սերմերով, ծաղիկներով, խեցիկներով, քարերով և այլն, վորոնք ունեն բազմազան ձև, մեծություն, գույներ, ծանրություն. այս ամենը նպաստում է նաև շրջապատի ծանոթություն, վոր շատ անհրաժեշտ է և պետք է սկսել ամենավաղ տարիքից:

Գյուղում ավելի հնարավորություններ կան բույսեր պահելու, մշակելու, կենդանիներին խնամելու, նրանց կյանքն ու սովորությունները ճանաչելու:

ՄԱՆԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Այս խնդիրն իր կարևորությունը պատճառով պետք է հատուկ ուշադրություն արժանանա: Ինչպես ասացինք, բնութան յերեվույթների ակտիվ ծանոթությունը, արտադրություն պրոցեսում ավանդապես յերևույթներն ու վերափոխումը՝ մարդու կարիքներին այն ծառայեցնելու նպատակով,— այս բոլորը յերեխային մոտեցնում են ուսուցիչը կյանքին և նպաստում են նրա մեջ մատերիալիստական աշխարհայացքի կազմակերպման:

Կոլխոզի գյուղատնտեսական միջավայրը նպաստում է մանկապետության, հասարակայնության, չքավորի ու միջակի պայքարի ըմբռնման՝ կուլակի ու կղերականների դեմ:

Կանոնավոր կազմակերպված գյուղատնտեսական աշխատանքները սովորեցնում են՝ ճանաչել շրջապատը, կազմակերպված աշ-

խատել իր կոլեկտիվում, դնահատել աշխատանքը, ծանոթանալ կենդանիների ու բույսերի կյանքին, հողատար լինել դեպի գործիքները, դնահատել դիրքն ու գիտությունը և այլն:

Այս աշխատանքների մեջ կարևոր տեղ է բռնում բանջարանոցի մշակումը, վորի բոլոր ձևերին ու ետապներին կարող են ծանոթանալ ու մասնակցել յերեխաները—մոխրի ու թռչնաղբի հավաքելը, արմատապտուղների—սերմերի ընտրելը, հողը մշակելը, գործիքներն ընտրելն ու նրանց հետ վարվելը, ցանելը, քաղհանը, ետելը, քաղելը և այլն: Բանջարանոցի միջոցով յերեխաները ծանոթանում են նոր կուլտուրաների մշակման (սալատ, ծաղկակաղամբ, սլոմիգոր և այլն):

Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում չպետք է մոռանալ հասարակական—քաղաքական դաստիարակություն պահանջները. այս նպատակով լավագույն միջոցներից մեկն է գյուղատնտեսական—սեզոնային բնույթ կրող տոներին մասնակցելը. որինակ «բերքի տոնին» յերեխաները կարող են մասնակցել իրենց բանջարանոցի արմատապտուղներն հավաքելով, ընտրելով, հաշվառման յենթարկելով և ձմռան պաշար պատրաստելով. անշուշտ հնարավոր է նաև մանկահիմնարկում բերքի տոնին նվիրված ցուցահանդես կազմակերպել և մասնակցել տեղում կազմակերպված ցուցահանդեսին:

Թռչնաբուծությունը, հատկապես հավաքուծությունը, մեծ հետաքրքրություն է ներկայացնում նախադպրոցական յերեխայի համար, մանավանդ ինկատի ունենալով աշխատանքի մատչելիությունը և այն դեպի արդյունքը, վոր տալիս է ոացիոնալ կազմակերպված հավաքուծությունը գյուղական տնտեսություններին: Այս աշխատանքի նպատակահարմարությունից յենելով պետք է կազմել կոլխոզի թռչնաբուծական սեկցիայի (յեթե կա) և գյուղատնտեսի հետ, մաստու և ձվաբեր հավերի ցեղերը դարձացնելու, կերն ու խնամքը կանոնավոր տանելու համար: Ղեկավարն ուսումնասիրելու յե հավաքուծության պայմանները շրջանում (ցեղերը, կերի տեսակները, հիվանդությունները և այլն), ինքը ծանոթանալու յե հավաքուծության տարրական պահանջներին և յերեխաների հետ կազմակերպելու յե հետևյալ աշխատանքները.—«թառ», կերակրասեղան կամ կերակրարկղ շինել, ջրաման պատրաստել, հավաքուծ մաքրել, հիվանդ հավերին առանձնաց-

նել, հավերին կերակրել, ստուգիչ ընկեր կազմակերպել ու աշխատանքը ղեկավարել, թխսին խնամել, ճտերին կերակրել, ծանոթանալ ինկուբատորին և այլն:

Մյուս թռչունների խնամքը համեմատաբար ավելի դժվար է. սակայն յերկրաները կարող են կոլխոզի թռչնոցում մասնակցել բազի, սաղի, հնդկահավի խնամքին:

Նման աշխատանքներ ու դիտողություններ կարելի չե կազմակերպել նաև կոլխոզի մյուս կենդանիների նկատմամբ—խոզերի, հորթերի, ճագարների, ինկատի ունենալով անասնապահության բարձրացման կարելիությունը:

Կոլխոզի և մանկհիմնարկի բարեկարգություն համար մեծ նշանակություն ունի ծաղիկոցը, պարտեզը, փոքրիկ կոլխոզնիկները մեջ պետք է կուլտուրական վերաբերմունք ստեղծել դեպի այս աշխատանքը, չկոխտել ու արորել մարգերը, խոտերը, չքաղել դեռևս չբացված ծաղիկները և այլն: Ծաղկոցի միջոցով կարելի չե ծանոթանալ նաև ջերմոցային աշխատանքներին:

Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում յերկրաներին կարելի չե պատվաստել կոլեկտիվ աշխատանքի ունակություններ, աշխատանքի սոցիալիստական մեթոդներ (սոցմրցում, հարվածայնություն, «բանբրիգադներ» և այլն): Այս աշխատանքներին պետք է մասնակցեցնեն կուլտուրական, կոլեկտիվ և գյուղատնտեսական դպրոցների ուսանողներին, պիոներներին, ձեռնհաս կոլխոզնիկներին և այլն: Յերկրաների «արտադրական» աշխատանքներին ղուգընթաց պետք է տրվեն համապատասխան դիտելիքներ, հետզոտական ունակություններ և մեծերի՝ նման աշխատանքներին ծանոթություն:

ԱՇԽԱՏԱՆԻ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՅԵՎ ԿՈՒՆՈՋՈՒՄ

Կոլխոզնիկները շատ լավ դիտեն, վոր մանկհիմնարկը կենցաղի առողջացման գործում մեծ դեր է կատարում, վոր մեր կյանքը վերակառուցելու համար անհրաժեշտ է նոր, առողջ, կոմունիստներն դաստիարակված սերունդ, վոր փոքրերը պետք է սովորեն այն, ինչ իրենք չդիտեն և չպետք է ապրեն այնպես, ինչպես իրենք են ապրել: Բայց այս բոլորը ձեռնարկելու, կազմակերպելու և ղեկավարելու համար անհրաժեշտ է պատրաստված, իդեոլոգիապես հարազատ և հասարակական ջիղ ունեցող մանկավարժ:

Այս ծանր աշխատանքը ղեկավարն հաջողությամբ կտանի, յեթե նա ինքը մասնակցի գյուղի և կոլխոզի հասարակական կյանքին և մանկհիմնարկի շուրջը հասարակություն կազմակերպի: Նախադպրոցականը (և ընդհանրապես կուլտ-աշխատավորը) չի կարող սահմանափակվել միայն իր հիմնարկի նեղ պատերով: Նա չի կարող հեռու վախճել գյուղի յեռացող կյանքից, շինարարությունից, պայքարից, կոլխոզի աշխատանքներից, այլ պետք է ահտիվ մասնակցի՝ վորտեղ և ինչիվ կարող է: Իհարկե ուսուցիչը կամ նախադպրոցականը հանրագետ չի և չի կարող մասնակցել բոլոր խնդիրներին, բայց նա կարող է ներգրավել բժշկին, գյուղատնտեսին, անասնաբուծին և մյուս հասարակական աշխատավորներին ու մասնագետներին այս կամ այն խնդիրը պարզելու, անդեկությունը տալու, աշխատանքը կատարելու, գիրքը կամ թերթը ձեռք բերելու և այլն:

Այսպիսով հասարակական մանկավարժական աշխատանքը տարվում է յերեք ուղղությամբ:

1) Բնակչության ներգրավումը նախադպրոցական հիմնարկների կազմակերպման գործում և յերկրաների հետ տարվող աշխատանքներում, ահտիվի կազմակերպումն՝ աշխատանքների և կոմունիստական դաստիարակության ազդեցության համար:

2) Ոգնություն կոլխոզին կուլտ-աշխատանքների բնագավառում:

3) Կուլտուրական ու խորհրդային էլիտանություն գիրեկտիվների համաձայն գյուղում վորոշ քաղաքական և կուլտ-կրթական աշխատանքների մասնակցություն՝ գյուղի հասարակական և կուլտուրական կազմակերպությունների հետ:

Առանձին ուղղություն պետք է դարձնել կանանց մեջ տարվող աշխատանքներին, նախ՝ վորովհետև կինն ավելի հետամնաց տարր է հանդիսանում գյուղում և յերկրորդ, վոր ղեկավարն, իբրև կին, ավելի հնարավորություն ունի մոտիկանալու և վրասահունություն դրավելու:

Ծնողների և բնակչության մեջ տարվող աշխատանքներին պետք է մատչելի ու հետաքրքիր բնույթ տալ, չհետևել շաբլոնի, ձևի յետեվից չընկնել:

Այսպես, որինակ, ղեկուցումները չպետք է յերկար լինեն, իհոտ դրական վոճով, այլ պետք է ուսումնասիրել շրջապատը և

հենվել կենդանի վաստերի, դեպքերի վրա, լսողներին մասնակից
անել, զրույցին հարց ու պատասխանի ձև տալ: Ընտանիքի հետա-
զոտումները չպետք է պաշտոնական բնույթ կրեն, գրավոր ան-
կետներով, հարց ու փորձով և այլն, այլ պետք է բնական և մտեր-
մական խոսակցությունների բնույթ կրեն:

Նախադպրոցականը, մանկավարժը, կուլտ-մարտիկը և ընդ-
հանրապես գյուղում հասարակական աշխատանք տանողը պետք է
տողորված լինի այն համոզմունքով, վոր այս վոչ թե լոկ կուլ-
տուրականութուն է» (культуричество) կամ ոժանդակ աշխա-
տանք, այլ դասակարգային պայքարի անբաժան ողակներից մեկն
է, վորն՝ ամենից առաջ՝ իր բոլոր միջոցներով նպատակ է դնելու
նպաստել գյուղի սոցիալիստական վերակառուցման:

VIII. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Резолюция ноябр. пленума ЦК и ЦКК, II партосвещ. и XVI съезда.
2. Шульгин—5-летка и задачи народн. образования.
3. В помощь дошк. работнику колхоза, 1930.
4. Королев и Раскин—Воспитат. задачи школы.
5. Попов—Детское движение в системе соц. воспит.
6. Амосов—За безбожную детвору.
7. Фрадкин—Интернациональное воспитание.
8. Крупская—Трудовая политехнич. школа.
9. Заочные уроки Инстит. Повыщ. Квалиф. педагога.
10. Методич. письма, Библ.—копейка и «В помощь семье»... по дошк. воспит.
11. Журнал «Дошкольное воспит.» 930 и 31 г.
12. Детский сад в колхозе (3 выпуска).
13. Материалы к работе дошк. учреждения в городе. 1931 г.
14. Как организовать детский сад, 3-е изд.
- 1). Программы пулевых групп.



« Ազգային գրադարան



NL0223657

1964 25 ч. (8 л.)

50. 717

М. ДУРГАРЯН

ДОШКОЛЬНОЕ ВОСПИТАНИЕ В ПЕРИОД
СОЦИАЛИСТИЧЕСКОЙ РЕКОНСТРУКЦИИ

Госиздат ССР Армении
Эривань—1931

372.21

п - 98